ՏԱՐԱԶ

Գեղագիտական, Գրական, Հասարակական, Քննադատական, Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քաոներվեցերորդ տարի **ԱՊՐԻԼ** **№ 4· 1915—XXVI**

Հասցէն՝ Тифлис, Редакція „ТАРАЗ“. Tiflis (Caucase), Direction „TARAZ“

Խմբագրութիւնը յօդուածները՝ կրճատում է, ենթարկում փոփոխութեան և՝ չընդունելիքը (երեք տերից պակաս) չի վերադարձնում։

անձնական տեսակցութիւն խմբագրի հետ **ԵՐԵՔՇԱԲԹԻ և ՈՒՐԲԱԹ** *առ ժ. 11—12։*

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով **Տարազի** *յայտարարական սողը* **առաջին** *երես 40 կ., վերջին 25 կ. մանրատառ (պրեխտ)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնուողներն՝ առանձին համաձայնութեամբ։*

Սդրիւր-Տարազ *ամսական 33 կ.*

Տարազի ներկայ №-ը (VI-րդ հրտ.) 1 ր.

Խմբագրութիւն—Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. № 41, բաց է ամեն օր (բացի տօն և կիրակի օրերից) առ. 10½, ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։

Голов. пр., 41 *Տելեֆօն 16—90*

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1915 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Մայիսի 6-ին յօգուտ

ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ

ԸՆԿ.

Դիկավարութեամբ հռաժեսագէտ

ԴՐ. ՄԻՐԶՈՅԵՑՆԻ

կը կայանայ հանդիսաւոր

ԿՈՆՑԵՐՏ

Տոմսակները վաճառւում են



ՄԵԿԸ ԵԿԱԾԼԵՑՆԻ «ՀՑՑՐ ՄԵՐԸ»





Պետրոգրադում ներկայ ապրիլի 10-ին երկաթեայ ծանր հիւանդութիւնից վախճանուել է յայտնի բժիշկ եւ հասարակական գործիչ Արտաշես Յովհաննիսեանի Բուդապեստում։ Ընկերների մի խումբ կամենալով յարգել նրա յիշատակը ինչպէս գործիչ, յարգանքի հրատիրում է բնակիչներին եւ յիշատակը յարգողներին կիրակի, ներկայ ապրիլի 19-ին երեկոյեան 9 ժամին իրանց ընտանիքներով ժողով տալ Տիգրան Նազարեանի Գրական-Գեղագիտական Սալօնը (Головин. пр. 41) ուր կը կայանայ հանգուցեալի յիշատակին սգահանդէս։

Պրօճեսօր Աղայանեան Կ. Ս., բժ. բժ. Աղասարեան Բ. Գ. Ալեքսանի Վ. Մ., Զատարեան Պ. Ս., Մելիոնեանց Գ. Ս., Քալանթարեանց Ա. Յ.։

ԹԱԹԱԽՈՒՄ

Գրական-Գեղագիտական Սալօնը մասուցանում է հրապարակական յարգանք նրանց, որոնք իրանց մասնակցութեամբ և աջակցութեամբ հնարաւոր արին մեր արիւնակից փախստական-գաղթականներին (Ուսուցչ. Միութեան ուսումն. սովորող 130 աշակերտներին իրանց ծնողներով), ընդ ամին 258 հրաւիրեալ փախստականների զատկական Թաթախումը վայելուչ կատարելու։

Յարգանք Գերապատիւ Հ. Բենիկ վարդապետին, Գերշնորհունակ Մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանին, Շնորհունակ կոյս Երմոնեայ Բերուչեանին, Արժ. Հ. Խուցեան քահանային, որոնք եկեղեցական վեհաշուք նանդիսաւորութեամբ օրհնեցին Թաթախման սեղանը, սփոփանք բինելով մեր հիւր արիւնակիցներին։

Յարգանք սեղանին սպասաւորող և երեկոյին նւագող, երգող մեր գորովագութ տիկիններին, համեստափայլ օրիորդներին, գիտակից արեւտագէտներին, գրականագէտներին, գեղագէտներին, մանկավարժներին և Մշակի խմբագրութեան՝ Թաթախման յայտարարութիւնը անվճար տպագրելուն համար։

Յարգանք իրանց սրտաբուխ լումայով աջակից՝ պ. պ. և տ. տ. Խ-ին (25 ր.), Մարկոս Դոլուխանեանին (25 ր.), Մշակի խմբագրութեանը (24), Մինաս Սուլխանեանին (15 ր.), Մնացական Յունունցին (15 ր.), Դաւիթ Յարագեանին (15 ր.) Մարիամ և Միքայէլ Դաֆեան ամուսիններին (10 ր.) բժշկպ. Միքայէլ Շահ-Պարոնեանին 10 ր.), Ա. Ֆ. Փրիդոնեան բանկային տանը (10 ր.), բժշ. Արտաշէս և Վարվառէ Շեխան ամուսիններին (10 ր.), Մարգարիտ և Պօղոս Սարգսեան ամուսիններին (10 ր.), Կոնստանտին Ալիխանեանին (10 ր.), Յովհաննէս Շադինեանին (10 ր.), Ռոստոմ և Հայկանուշ Մարտիրոսեան ամուսիններին (10 ր.), Թագուհի Բէգլարեանին (5 ր.), Ահարոն. Տուն Ց. Տ. Տէր-Գասպարեանին (5 ր.) Մրզէյ Գաֆեանին (5 ր. և երկու դուժին թաշկինակ), բժշ. Կարապետ Ստեփանեանին (5 ր.), բժշ. Յովհաննէս Միրաքեանին (5 ր.), Յարութիւն Զմշկեանին (5 ր.), Մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանին (5 ր.), Ալէքսանդր Քիշմիշեանի այրի տ. Թամարային (5 ր.), Սամսոն Յարութիւնեանին (5 ր.), Նախշիրա Ընկ. (5 ր.), կոյս Երմոնեայ Բերուչեանին (3 ր.), Նատալիա Կրասիլնիկեանին (3 ր.), Նադէժդա Վարդապետեանին (3 ր.), Սօֆիա Գրամեան-Իւզբաշեանին (3 ր.), Իւլիա Սպենդերեանին (3 ր.), Նունէ Սունդուկեանին (3 ր.), Շուշանիկ Համազասպեանին (3 ր.), Վիկտորիա Աբրովեանին (3 ր.), բժշկպ. Բագրատ Նաւասարդեանին (3 ր.), Յովհաննէս Ակունեանին (3 ր.), Լևոն Վարազեանին (3 ր.), Տիգրան Ռօտինեանին (3 ր.), Դ. Յ. Ռօտինեանին (3 ր.), ինժինէր Գրիգոր Եարալեանին (3 ր.), Կոստանտին Տէր-Աստուածատրեանին (3 ր.), Իշխան Համազասպեանին (3 ր.), Յարութիւն Համազասպեանին (3 ր.), Սանդրօին (1 ր.), Յակոբ Մելիք Բախտամեանին (500 ձու), Դաղաշեան եղբ. (20 ֆ. կանֆէտ), Մելքոն Ռաֆայէլեանին (ոսկեթել հոր ընծայ փաթեթները կապելու համար), Մանուէլ Կիրակոսեանին (կոնդիր. վենեցիա 3 պասկա), Հայկուհուն (20 ֆ. բրինձ), Եղբ. Էնֆիանճեաններին (3000 պապիրոս), Մանուկ Գասպարեանին (երբեմն մտամոլոր թափառական) որ 150 ծրարներում 10-ական կոպէկ արծաթ դրամ (15 ր.) ընծայաբերեց թաթախուղ աշակերտներին տրամւայի համար։ Ւելացած ծրարները դրւից և այն կանանց, որ հետները ձձկեր հրեխաներ էլ էին բերել։

Ծախսը մուտքից աւելի է 228 րուբլիով։ Ստացած է դրամով 329 ր., իսկ ծախսած 557 ր.։ վարձ 330 պնակի ամանեղէն, աթոռներ, սեղաններ 60 ր.։ Զըկնեղէն, խաւեար, պանիր, կանաչեղէն, ձու 143 ր.։ Իւղ, բրինձ, 38 ր.։ Հաց դանազան տեսակ 36 ր.։ Միրգ, կանֆետեղէն, ծաղիկներ 54 ր.։ Ջայ, շաքար, լիմոն, քաղցրաւենիք, թխւածք ու պասկա 38 ր.։ Գինի, լիմոնադ 35 ր.։ Ընծայաբերութիւն՝ 24 դիւժին թաշկինակ (լի մրզեղէնով, կանֆետով, պապիրոսով), սազանդարների, խոհարարների, վարձկան սպասաւորների, մշակների 85։ Ոոհանոցի ծախս կարտոֆիլ, համեմներ, փայտ, ածուխ, աղ, պիղպեղ, մանանեխ քացախ, նարշարաթ, ներկ, սոխ, պատա ինչպէս և կորած, կոտրած, փըշրւած վարձու ամանեղէններին 46 ր.։ Մենիւ 300 հատ պեղանկար, հրաւիրատոմսեր, պօստային մարկաներ 22 ր.։

Սեղանից աւելացած և խոհանոցում կաթսաներում, բուֆետում ճաշացած մեծաքանակ ուտեստները և աւելի քան 10 պուդ հաց, պապիրոսներ ուղարկւած են հետեւել օրը սրբազան էքզարխի նախագահութեամբ յանձնաժողովին սորի փախստականների համար, Ուսուցչ. Միութեան ուսումն. փախստական աշակերտներին և այլ պանդուխտներին։

Այդ ծախքի մի մասը՝ 329ր. իրենց բարեսրտութեամբ ծածկեցին վերոյիշեալ յարգելի անձերը. հէնց այդ նւիրաբերութեան համար է, որ պարտք ղգացինք այս հաշիւը ներկայացնել ի գիտութիւն ամենի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՆԵՐ

Բժշ. Արտաշէս Բուդուղեան.
Պօղուչիկ Արտաշէս Վարդանեան.
Կ. Պօլսի կաֆէում խորհրդաւոր խորհրդակցութիւն.
Վրացի մի խումբ կամաւորներ.
Հայրենասէր քաջամարտիկ Անդրանիկ.
Անդրանիկը իր զինակիցներով.
Հնչակեան I խմբի կամաւորներ.
Գարնանաբոյր ինդանօթ.
Մ. Եկմալեան.
Ներսէս Պարոն-Սարգսեան.
Փառք յաղթւածներին.
Դաշնակահարուհի Մարգարիտ Միրիմանեան.
Մ. Եկմալեանի ձայնագրած «Հայոց մերը».

ՆԻՒԹ

Բժշ. Արտ. Բուդուղեան	Պրոֆեսոր Կ. Աղաջանեանց
Բժշ. Ա. Բուդուղեան (կենսագր.)	
Արտաշէս Վարդանեան »	
Յուշիկ (Բանաստեղծ.)	Ց. Յովհաննիսեան
	Սեդրակ Մանդինեան
Մարդկային հոգու անմահ. մասին	Ց. Վարդանեան
Ո՞ւր է սլանում Անդրանիկը	Ա. Թոփչեան
Փախստական. «Քրիստոս յարեաւ»	Բենիկ վարդապետ
Գարնան սկզբին...	Գառ. Ղազարեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մ. Եկմալեան	Են. Տ. Յակատրեան
Պարոն Սարգսեան	Ց. Գինջեան
Դաշնակահարուհի Մ. Միրիմանեան	Tigo

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Իսկական Թաթախում	Հ. Առաքելեան
Թաթախում	Տ. Նազարեան

Նամակ Հնդկաստանից	Անի ընկ. Ճեմարանի սաներ
կալկաթայում սպանդէս Ալոյեանի յիշատակին	Ղարիբ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Տիգրան Նազարեան

ՏԻՖԼԻՍ

REDACTEUR EN GHEF ET DIRECTEUR
Tigran Nazarian

№ 4 ԱՊՐԻԼ XXVI—1915 TIFLIS

ԲԺՇ. ԱՐՏԱՇԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

Երևեցաւ նա և չքացաւ... Նա ծնուել է հայ նահապետական ընտանիքում, Ախալցխայում, ուր միջնակարգ դպրոցներ անգամ չկային, շրջապատուած մաքուր մթնոլորտով ու պարզութեամբ. հէնց այս պարզ ու մաքուր պատգամներով ու հոգու անսահման սիրով նա ապրեց մեզ հետ և չքացաւ մեզանից։

Նա անյայտացաւ՝ հիւծուած ծանր հիւանդութիւնից, ճշմարտութեան մեծ կռւի մէջ, սակայն անյաղթելի հոգւով ճեղքով մինչև մահը մաքուր, պայծառ և ուժեղ։

Բուդուղեանի բժշկական գիտութիւնը սերտ կապուած է յայտնի ռուս սիֆիլիդոլոգ պրոֆեսոր Տարնովսկու անուան հետ, որը սիրեց Բուդուղեանին և եղաւ նրա առաջին քայլերի ուղեցոյցը։ Գիտութեան այն բոլոր հոսանքները, որ տիրապետում էին Բուդուղեանի առաջին քայլերում՝ յափշտակեցինն նրան և նա ինչպէս միամտորդ ուսանող անձնատուր եղաւ սիրած գործին և աշխատում էր պարզաբանել գիտութեան մութ կողմերը։ Վիներական հիւանդութիւնները, որոնց զանազան արտայայտութիւններն այն ժամանակ դեռ այնքան պարզ չէին ուսումնասիրուած. և այդ ասպարիզում մեծ դեր էին խաղում Բիկորի, Ֆուրնիէյի և այլ հանճարեղ գիտնականների յայտնած մտքերը։ Բուդուղեանը դիտում էր հիւանդութեան զանազան նշանները, ամենախոր կերպով թափանցում էր ախտաբանութեան խորքեր, որ ուրիշ դիտողի համար կարող էին մինչև անգամ անհասկանալի լինել։ Պրոֆեսոր Տարնովսկու կլինիկանեբում Ա. Բուդուղեանը ղեկավարում էր ուսանողների գործնական պարապմունքները. նրա աշակերտներից շատերը ստեղծեցին գիտութեան մէջ շատ փայլուն դիրք, իսկ ինքն ուրախանալով իր աշակերտների յառաջադիմութեամբ՝ չը ստեղծեց իր համար գիտութեան մէջ պաշտօնական դիրք։ Նա նախ և առաջ գործնական բժիշկ էր և շատ առոյգ ընութեան տէր մարդ. նա չը ցանկացաւ իրան նուիրել միմիայն զուտ գիտութեանը։ Ղեկավարել ուսանողութեան գործնական պարապմունքները, բուժել անթիւ ու անհամար հիւանդներ՝ ահա այն կենդանի գործը, որին նուիրել էր Ա. Բուդուղեանը իր հոգու ուժերը։ Նրա բազմաթիւ աշակերտներն ու հիւանդները միշտ գնահատել են այն դիտողութեան ոյժը և այն ահագին փորձը, որոնց շնորհիւ Բուդուղեանը ներկայանում էր իբրև առաջնակարգ կլինիցիստ։ Մարդիկ առ հասարակ գրաւելով արտաքին փառքով, չեն ցանկանում ճանաչել իրանց ուժերը և իրանց հոգեկան ձգտումները։ Սրանք աշխատում են կատարել այն գործը, որ տալիս են ոչ թէ հոգու բաւարարութիւն, այլ արտաքին փառք։ Բուդուղեանը գործին նուիրուելով փառքի կամ նիւթական հաշիւներից հեռու էր. նա կատարում էր այն գործը, որ տալիս էր իրան ներքին բաւարարութիւն։ Զը բաւականանալով միմիայն բժշկական գործունէութեամբ՝ Բուդուղեանի կենդանի հոգին որոնում էր հասարակութեան լայն շրջաններ, ուր նա կարող էր տարածել գիտութեան լոյսը։ Բուդուղեանի մատչելի լեզուով գրւած գրքոյկները ամենապարզ կերպով ծանօթացնում են հասարակ ընթերցողին գիտութեան վերջին խօսքի հետ առողջապահութեան և զանազան հիւանդութիւնների վերաբերեալ։

Բժ. Արտաշէս Յովհաննիսեան Բուդուղեան

Ծն. Ախալցխա 20 դեկտ. 1864 թ. † Պետրօգրադ 10 ապրիլի 1915 թ.

Առողջապահութեան Բուդուղեանը մի առանձին ուշադրութիւն էր դարձնում. դա մի գիտութիւն էր

նրա համար, որի միջոցաւ հիւանդութիւնն ինքն ըստ ինքեան պիտի չքանար։ Բուդուղեանի առողջապահութիւնը վէներական հիւանդութիւնների շրջանում միևնոյն ժամանակ և մի բարոյական մաքրութեան քարոզ է։ Բժշկականութեան մէջ ամեն մի աչքի ընկնող հարց Բուդուղեանի համար նիւթ էր, որի մասին նա չէր կարող չը գրել։ Նրա գրքոյկներում շօշափւում են նոյնպէս և հասարակական հարցեր։ Լինելով մեծ մասնագէտ բժիշկ, նա թափանցում էր նոյնպէս կեանքի և պիտութեան զանազան այլ կողմերը։

Բուդուղեանը նախ մարդ էր բառիս բուն նշանակութեամբ և բացի դրանից մեծ ազգասէր։ Սրա ազգասիրութիւնը խռովութեան և անհաշտութեան աղբիւր չէր իր համար. նա ջերմ սիրում էր ազգը և յարգում օտար ազգերի արժանաւորութիւնները։ Հասարակական գործունէութեան մէջ նա թշնամի էր կուսակցութեան. «Ճշմարիտ գործ կատարողը, ասում էր նա, պէտք է զիջանէ եւ ընդունէ հակառակորդի կարծիքը այն դէպքում, երբ գործի համար աւելի նպաստաւոր է»։

Բուդուղեանի ուսանողութեան տարիները շատ ծանր էին նիւթականի կողմից. զանազան զրկանքներ, ծանր աշխատանք, բանտարկութիւն և անվերջ կռիւ ճշմարտութեան համար՝ սպառեցին նրա ուժերը և նա այլևս չը կայ...

Բուդուղեանի անունը մի փայլուն էջ է հայոց ինտելիգենցիայի պատմութեան մէջ. հանգաւ նրա աստղը, բայց կենդանի է նրա գեղեցիկ հոգին, որ իր անսպառ ուժերը նուիրել էր հիւանդ մարդկութեան, հասարակական հարցերին և լուսաւորութեան։ Թէ ոուս և թէ հայ հասարակութիւնը միշտ գնահատել և սիրել է Բուդուղեանին, և այն գաղափարները, որոնց նա ծառայել է, պէտք է նուիրական լինեն ամեն մտածող մարդու համար։

Հանգիստ նրա ոսկորներին. անմահութիւն նրա յիշատակին։

Պրօֆեսօր Կ. Աղաջանեանց

—

ԲԺՇ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

Ծնուել է 1864 թ. դեկա. 20-ին Ախալցխայում։ Սկզբնական ուսումը ստացել է Ախալցխայում Գայֆէճեան քահանայի մօտ։ Միջնակարգ կրթութիւնը Թիֆլիսի առաջին գիմնազիայում, իսկ համալսարանը վերջացրել է Վարշաւայում 1890 թուականին։

Աւարտելուց յետոյ ընդմիշտ հաստատուած Պետրօգրադում, իսկ ամառները Պիատիգորսկում։ Հանգուցեալը դրել է 60-ի չափ բժշկական հանրամատչելի գործեր և հրատարակել է նոյնպէս բազմաթիւ ժողովրդական ընթերցանութեան համար գրքեր

Լինելով մարմնացած հոգի և վառ հասարակական ձգտումների տէր մարդ, մինչև իր մահուան անկողինը չէր դադրում գործելուց և իր ապագայ ծրագիրները մշակելուց։

Բուդուղեանի մի դիրքը Թիֆլիսում դեռ տպաւորում շարունակում էր, երբ նա Պետրօգրադում, ապրիլի 10 ին աւանդեց հոգին և կիրակի ապրիլի 12-ին այնտեղ էլ ամփոփուեց մարմինը։ Թիֆլիսում թաղման օրը Կուկիայի ս. Աստուածածնայ եկեղեցում ներկայութեամբ ինտելիգենցիայի կատարուեց հոգեհանդիստ։ Դամբանականները խօսեցին Տէր Սահակ ք. Սահակեանը և պրօֆեսօր Կ. Աղաջանեան։ Կիրակի, ապրիլի 19-ին Գրական-Գեղագիտական Սալօնում նախաձեռնութեամբ պրօֆեսօր Կ. Աղաջանեանի և բժշ-ների Բ. Աղասարեանի, Վ. Արծրունի, Պ. Զաւարնանի, Գ. Մելքոնեանի և Ա. Քաթանեանի կը կատարւի հրապարակական սգահանդէս, որին հրաւիրուած են Թիֆլիսի բժիշկները իրանց ընտանիքներով և հասարակական-կուլտուրական հաստատութիւնները։

Արտաշէս Մովսիսեան Վարդանեան † 1915 թ.

Ապրիլի 14-ին զինուրական հանդիսով Մօջավանքի գերեզմանատանը ամփոփուեց երիտասարդ հերոս պօրուչիկ Արտաշէս Վարդանեանի, Թիֆլիսում յայտնի տպարանատէր Մովսէս Վարդանեանի որդու, աճիւնը։ Հանգուցեալը 1909 թ. աւարտելով Օդէսայի զինուրական ուսումնարանը, նետւում է ճապօնական պատերազմը և նկատւում իր քաջագործութիւններով։ Համաշխարհային այս պատերազմի սկզբից կուռւմ է Քըշնամուն դէմ առաջին շարքերում։ Անցեալ տարւայ հոկտեմբերին ստանում ս. Գէօրգեան ոսկի թուր, նշանաւոր յաղթութիւնների համար և պարգևատրւում չորս շքանշաններով։

ՅՈՒՇԵՒ

Մտաւ արևն, ազիզ եար,
Լոյս եմ ուզում, դուս արի.
Գիշերն անաստղ ու խաւար,
Ո՞ւր ես, լուսնեակ, դուս արի։

Ծովը ծփում, վշվշում,
Աչքըս քցած ջրերին
Էն իրիկունն եմ յիշում,
Կարօտ անուշ պատկերին...

Էն իրիկունն էլ խաւար,
Ծովն էր ծփում, վշվշում.
Դու հետս էիր, անուշ եար,
Էն կարօտն եմ դեռ քաշում։

Լուսնեակ, աստղեր պէտք չէին
Ջուխտ արև էր լոյս տալիս.
Շողոտ, ցօղոտ աչքերին
Ջանըս մատաղ լոյս եարիս։

Էն շողն ու ցօղն եմ ուզում,
Քեզ եմ կանչում, եար, արի.
Սիրտըս ծովի պէս յուզւում,
Քեզ է մընում, շուտ արի։

Ջ. Յուշեւեան

„РОССІЯ и АРМЯНЕ“ — ՌՈՒՍԻԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Այդ վերնագրով Լէօն «Кавк. Слово»-ի մէջ շարունակ տպագրում է մի յօդուած, որի մէջ ամենանշանաւոր հատուածը այն փաստերն են, ուր որ առաջ են բերւած Պօլսի դեսպան գեներալ Իգնատիեւի գրագրութիւնները երջանկայիշատակ Գէորգ IV կաթողիկոսի հետ։ Այդ փաստերը առաջին անգամն են հրատարակւում հայրապետական և Սինոդի դիւանների։ «Մշակը» ժամանակ առ ժամանակ, պնդելով թէ դրանք նորութիւն չեն և իրանց մէջ պարունակում են արդէն հանրածանօթ իրողութիւններ։ Հարկաւ այն գրագրութիւնները կարող էին ուրիշներին էլ ծանօթ լինել նոյն դիւաններից, բայց Լէօի ասածը դրանով չի հերքւում, քանի որ այն փաստերը այդպէս լրիւ և in extenso արդարև առաջին անգամ են հանդիսանում գրականութեան մէջ։

Իսկ յօդուածի մնացած մասերը կարելի է թէ նորութիւն չը համարւեն, որովհետև տեղեկութիւններն արդէն վաղուց յայտարարւած են կտկտուր կերպով և մաս-մաս այս կամ այն առիթով, զոր օր. «Մշակում», թերևս նոյնիսկ ուլտրա-մշակիստ Լէօի գրչով, որ իր յատուկ տաղանդով այսօր միևնոյն բանը ներկայացնում է մի այնպիսի թարմութեամբ, որ նորութեան տպաւորութիւն է գործում, բայց ի հարկէ մէջը պահպանելով «Մշակի» տրադիցիօնական դրոշմը ամենայն հաւատարմութեամբ։

Բայց մենք դառնանք Իգնատիեւի գրագրութիւններին։ Այնտեղ գլխաւորապէս արծարծւած են երկու խնդիր—Պօլսի մէջ կաթողիկոսի մշտական նստարակ հաստատելու խնդիր և այնտեղ՝ արտաքոյ կաթողիկոսական իրաւանց՝ մի ուսումնարանի հիմնարկութեան խնդիր։ Առաջինը լուսաբանւած է անթերի, երկրորդը մշուշով է շաղախւած։ Այս երկրորդում հանդէս է գալիս մի հարուստ ռուսահայ, որ յօժարում է իր դրամները նւիրել այն ապագայ ուսումնարանին։ Բայց ո՛վ էր այդ ռուսահայն. անշուշտ Մկր. Սանասարեանը, որի անունը Լէօն չի յիշատակում։

Յայտնի է, որ այն ժամանակներում Պօլսում սաստիկ տիրում էր անգլիասիրութիւնը, իսկ նոյն միջոցին Սանասարեանի անունը կապւեցաւ գեներալ Իգնատիեւի անւան հետ, հասկանալի է որ անունների այսպիսի զուգակցութեամբ պիտի սկսէր մի իրաբանցուիմ, և իրօք աչ ու ձախ շպռտւեցան յախտուռն կերպով «ազգակործան» ու «ազգաշէն» տառերը։ Պօլսի լրագրութիւնը իր ունեցած հատ ու կտոր տեղեկութիւններով բռնկեցրեց մի հրդեհ, որը ճարակեց նաև Սանասարեանի անունը և որի բուն արծարծողը թագուն նստած էր ՃՈւմ էջմիածնի պարիսպների միջև (Մանկունին, այն ժամանակ Վահրամ վարպետը)։

Ով որ ի մօտոյ ճանաչում էր Սանասարեանին, նրա համար անյարիր բան էր Սանասարեան և Իգնատև անունների զուգակցութիւնը։ Սրանով չեմ ուզում ասել, իբրև թէ Սանասարեանը չէր զբաղւում քաղաքականութեամբ և դիւանագիտութեամբ, այլ թէ նրան հետաքրքրում էր աշխարհի պօլիտիկոսներից և դիպլօմատներից միայն մէկը, յայտնի... Կապօ-Դիստրիասը։ Եւ եթէ Սանասարեանը որևէ մարդու մերմանում էր, նրան խորհուրդ էր տալիս ուսումնասիրել յունաց ազատագրութեան պատմութիւնը, մանաւանդ Կապօ-Դիստրիասի դերը այն յեղափոխութեան մէջ։ Հետևապէս նա մեր կեանքի համար անձկանօք երազում էր մի հայկական Կապօ-Դիստրիաս և նա գտաւ... Ռուսաց մայրաքաղաքում նստած Եզեանը՝ նրա աչքում արդէն ինքնին մի հայկական Կապօ-Դիստրիաս էր։ Եւ այսպէս ուրեմն Եզեանն էր այն օղակը, որով կապւեցան Իգնատիեւի և Սանասարեանի անունները Պօլսի ժամուլի մէջ։ Սանասարեանը սաստիկ ոգևորւած էր Եզեանի ծրագիրներով և ինչով որ կարող էր աջակցեց նրան, այսինքն իր բոլոր հարստութիւնը նրա բացարձակ տրամադրութեան տակ դրեց, որ սա էլ որպէս ամենահաւատարիմ տընտես ամենայն սիրութեամբ գործ դրեց։

Երբ որ ես Լէօի յօդուածում կարդում էի Իգնատիեւի ծրագիրները ապագայ հայկական ուսումնարանի մասին, ինձ էլ այնպէս էր թւում, իբրև թէ դրանք անծանօթ բաներ չեն, այլ աւելի զարմանալով զգում էի, որ տեղ-տեղ բառերը, նախադասութիւնները, ոճը շեշտած գաղափարները, նոյնիսկ պատմական նմանութիւնները (Մխիթարեանց միաբանութեան օրինակը) ինձ արդէն քաջ ծանօթ են։ Բայց ո՞ր տեղից... Ակնյայտնի եղաւ, որ դրանք արդէն վաղուց ինձ ծանօթ են եղել Եզեանի խօսակցութիւններից և նամակներից։

Արտասահմանում եղած ժամանակս ես արդէն լաւ ընտելացած էի այն մտքի հետ, թէ Սանասարեանը մտադիր է Պօլսում մի ուսումնարան հիմնել, ուր որ ես էլ դասատուութիւն պէտք է անէի, իսկ թէ այդ գործում Իգնատիեւը որևէ գործակցութիւն պիտի ունենար, այս մասին ոչինչ գաղափար չունէի. ուստի Պօլսի լրագրութեանց չարամիտ ակնարկները լոկ ափեղ-ցփեղ զրպարտութիւններ էի համարում, արժանի բացէ ի բաց արհամարհութեան։

Ուսումս արտասահմանում աւարտելուց յետոյ՝ պատւէր ստացայ մի քանի օրով Պետրօգրադ հանդի-

Կ. Պօլսի կաճէում խորհրդաւոր խորհրդակցութիւն

պել և ապա թէ ուղևորւել դէպի Պօլիս գործը ձեռնարկելու համար։ Այնտեղ իմ բարերարներին խոստովանեցի, որ վախենում եմ այդպէս վաղ գործ սկսել։ Ես մի երիտասարդ, անփորձ մանկավարժ, մէն մինակ (ընկերներս դեռ էլի մի քանի տարի պէտք է ուսանէին Զուիցարիայում), այն ևս տեղական տաճկահայ բարբարոին անձանօթ՝ ինչպէս պիտի կարողանայի այն աշխարհռչակ մայրաքաղաքում մի այնպիսի պատասխանատու գործ ձեռնարկել։ Ուստի աւելի բարւօք էի դատում առժամանակ ռուսահայոց մի խուլ տեղում փորձել նոր գործը, զոր օր. Հաղպատում, Սանահինում, և արդէն բաւական վարժւած՝ յետոյ գնամ Պօլիս։ Եղեանը շատ հաւանեց այս միտքը, իսկ Սանասարեանը պատրաստութիւն յայտնեց հոգալ բոլոր ծախքերը, այսինքն ուսումնարանի շէնքը, կահաւորութիւնը, դպրոցական պիտոյքները, դասագրքերի տպագրութիւնը և այլն, միայն թէ ես յանձն առնէի այնտեղ երկու կամ երեք տարի ծխական դպրոցի ուսուցչութեան պաշտօնը անձամբ կատարել։

Պետրօգրադ եկել էի ես մի քանի օրով, մնացի մի քանի շաբաթ։ Ամենայն երեկոյ Եղեանի հետ Սանասարեանում մանրամասնութիւններ էինք քննում և տնօրինում, մինչև որ հետզհետէ մեր խորհրդակցութիւնները կրկնւում և արդէն ձանձրալի էին դառնում։ Ամեն նշաններից երևում էր, որ Եղեանը բանը ձգձգում էր ինչ որ յայտնութիւններ անելու համար, բայց և խնայում էր ինձ, որ յանկարծակի չը գամ։ Ես շտապում էի Թիֆլիս՝ օր առաջ մօրս տեսութեան կաթսը առնելու, և մենք նշանակեցինք մեր հրաժեշտի վերջին երեկոն։ Դա մի հանդիսաւոր երեկոյ էր ինձ համար. ոչ իսկ կարողացայ երեկոյեան թէյը կարգին խմել, մտադրելով ընթրել իմ ընակարանում, ուստի պատրաստւեցայ վաղ դառնալ տունս և ժամանակին պառկել քնելու, որպէսզի հետևեալ օրը կազդուրւած ճամբայ ընկնեմ դէպի Թիֆլիս։ Սակայն ժամի 9-ը դառաւ 10, 11, 12 կէս գիշեր, ժամի 1, 2, 3 առաւօտեան ծագ։ Արդէն արտասահմանից անսովոր գիշերներ լուսացնելուն, այժմ ուռած աչքերիս քունը սկսեց կոխել, քաղցած փորով ոչ լսածն էի հասկանում, ոչ ասածներս կշռում, մտքերս սկսեցին բոլորովին շաղուել։ Յանկարծ տեղիցս վեր թռայ, որ հրաժեշտ առնեմ և հեռանամ։ Բայց Եղեանը բռնեց ձեռքս և ապշեցրեց ինձ երկու անակնկալներով։ Առաջինը թէ Սանասարեանը բնիկ տաճկահայ գոլով, դարձեալ միշտ իր նախկին մտադրութիւնն է փայփայում, որ իր ուսումնարանը այժմէն իսկ հիմնւի տաճկահայերի մէջ։ Ես առանց այլևայլութեան իսկոյն համաձայնեցի հետևեալ օրը ճամբայ ընկնել ուղղակի դէպի Պօլիս։ Երկրորդը, թէ «Պօլսի հանգամանքների և մարդկանց անծանօթ՝ պէտք ունիս հրահանգի և առաջնորդութեան. այնտեղ կը ներկայանաս դեսպան Իգնատևին և նա քեզ ամեն բաներում կը նպաստէ. հարկաւոր դրամներն էլ նրանից կը ստանաս...» կարելի է երեւակայել, թէ այն ինչ սաւը ջուր էր. որ վրաս քամուեցաւ։ Իմ առջև բացուեցաւ դիւանագիտութեան հասարակ չինովնիկ դառնալու վիհը, որ երբէք երազել անգամ չէի կարող. ընդհակառակ, եթէ հերքատակածը մի բանից պէտք է զգուշանար, այդ այն էր, որ մանկավարժութեան մէջ չը խառ է քաղաքականութիւնը... Ես ոմ, Իգնատև ոմ. մեզ ինչ կարող էր միաւորել... Ես ուրեմն պէտք է կորցնէի ինքնուրոյնութիւնս և օտարի կամքի մեքենայ դառնայի։ Փորձեցի

բողոքի պէս բան մրմնջալ, բայց երևի վրիպեցի ան-տեղի աւելորդաբանութիւններով։ Եղեանը սաստիկ վիրաւորուեցաւ, որ անպատւաբեր կասկածների մէջ եմ մտնում։ Կնճիռը սաստկացաւ, ժամանակն էլ տա-բաժամ էր մի բան կարգին լուսաբանելու համար, անհնարին էր տարակոյսները տեղն ու տեղը փարա-տել։ Ահա այսպէս յուսահատուած՝ ես էլ խօսքը կարճ կտրեցի, չմտածելով, թէ ինչ եմ գործում. յայտնեցի, թէ վաղը կուղևորուեմ իրանց ցանկութեան համեմատ դէպի Պօլիս։

Այստեղ աւելորդ չէ յիշատակել, որ Լէօի հրա-տարակած փաստաթղթերը կարդալիս՝ նոր մտքի ըն-կայ, որ երբ Պօլսի դեսպանական պալատներից մե-նամեծ եռանդով և կորովի յամառութեամբ պրօպա-գանդ էր մղւում մի հայկական ուսումնարան հիմ-նարկելու համար, ես Պետրօգրադի մի մասնաւոր տան մէջ կէս գիշերին խորշելով խորշում էի նոյն ուսում-նարանի առաջին քարը տնկելու պատւից...

Իսկ թէ ինչ սրտով միւս օրը ճամբայ ընկայ, դժւար չէ երևակայել։ Ճամբին միշտ այն եզրակացու-թիւնն էի գալիս, թէ պէտք է անշուշտ գնալ Պօլիս, մի երկու երեք շաբաթ համոզւել, թէ վերջնականապէս ինչ մթնոլորտ է կազմւում իմ շուրջը, և եթէ այն ան-տանելի լինի, նամակագրութեամբ խնդրել իմ բարե-բարներից, որ վերադարձնեն ինձ իմ նախկին հոգե-կան խաղաղութիւնը։

Երբ որ Թիֆլիս հասայ, զարմանալով գտայ, որ Սանասարեանի ուսումնարանը այլևս ոչոքի համար գաղտնիք չէր և օրւայ չարիքի խնդիր էր նկա-տւում՝ զանազան խմբերում զանազան կերպով։— Իմ բարեկամները՝ Աբգար Յովհաննիսեանը, Գէորգ Եւանգուլեանը, բժիշկ Բաբայեանը ոչ միայն անպայման մաքուր էին համարում Սանասարեանի և և Եզեանի մտադրութիւնը, այլ և որովհետև գործը սկսւել էր Եզեանի հմուտ ձեռքով՝ անշուշտ մեծ յա-ջողութեամբ էլ պիտի պսակւի... (տեղն է յիշել կա-պօ-Դիստրիասին)... Գրիգոր Արծրունին՝ գիտենալով որ իսկական պայքարողներ են Գէորգ կաթողիկոսն ու Եզեանը՝ հաւասարապէս բացասական կերպով էր էր վերաբերւում դէպի երկուսն էլ և իր չեզոքու-թեամբ՝ թողնում էր որ դրանք իրանք իրանց ճարպի մէջ տապակւեն. մանաւանդ որ հէնց ուսումնարանը տակաւին գոյութիւն չէր առել, ուրեմն օրւայ չարիք էլ համարւելու կարիք չէր տեսնում... Պետրոս Սի-մէօնեանը թէպէտ բնաւ չէր կասկածում Սանասա-րեանի և Եզեանի բարի դիտաւորութեանց, բայց Ե-զեանի քաղաքականութիւնը բացէիբաց սխալ և դա-տապարտելի էր համարում... Շանշեանը իր վճիռը կարում էր չեչոտակի գծով՝ առանց աչ կամ ձախ կող-մը տատանւելու,— «դիւի սուտ ին ասում, դիւի խար-դախութիւն ին անում...»

Այսպիսով յորձանքի մէջ բռնւելով՝ այլևս կարիք չունէի գնալ և տեղն ու տեղը փորձել Պօլսի մթնո-լորտը, քանի որ իմ տարտամ վիճակը պարզելու հա-մար՝ հէնց Թիֆլիսից կարող էի նամակագրութիւնը սկսել։ Բայց բախտս արդէն ծուել էր. փոխանակ Ե-զեանից ուղիղ պատասխանը առնելու՝ Սանասարեա-նից հեռագիր ստացայ, թէ «խոստմանդ համեմատ գնա Պօլիս»։ Խոստում... միթէ ես խոստացել էի խ-պառ հրաժարւել իմ անհատականութիւնից... Ճնշումը ակնյայտնի էր. ես ըմբոստացայ, այլևս Պօլիս չը գնացի։

Հարկ եմ համարում իմ երիտասարդ ընթերցող-ներին յայտնել, որ այն ժամանակւայ գործած իմ քայլը այժմ ինձ պարծանք չեմ կարող համարել։ Կեանքը իմ առաջ ստեղծում էր պայքարելու հանդէս, իսկ ես հանգստասէրութեանս համար փախայ ասպա-րէզից։ Փախչելը հեշտ է, բայց վատութիւն է։ Ով որ կեանքի մէջ ուզում է նոր ճամբայ բանալ, նա պէտք է քաջութեամբ, բայց մաքուր զէնքերով դժւարու-թիւններին ընդառաջէ, երկիւղ չը կրելով, որ անհաւասար կռւի մէջ կարող է ինքը նաև ընկնել... Ինչ և իցէ...

Լէօի փաստաթղթերը պատմում են, 1874-ին յանկարծ մէկէն ի մէկ խափանւեց Պօլսում ուսում-նարան հիմնելու ծրագրի իրագործւելը։ Հէնց այդ ժամանակ էլ ես հրաժարւեցի և Պօլիս գը-նալու մտադրութիւնից։ Իսկ արդեօք դէպքերը լոկ պատահական զուգադիպութիւններ էին, թէ դրանց մէջ մի ներքին կապ կար, այդ ես չեմ կարող պըն-դել. ես հարկ համարեցի միայն նկարագրել դէպքերն այնպէս, ինչպէս նրանք ընթացել են։

Արդեօք ինչ շահից Գէորգ կաթողիկոսը Պօլսի ծրագրի խափանմամբ։ Ոչինչ, նա ոչ թէ ուսումնա-րանի խափանումն էր փափագում, այլ ուզում էր իշ-խանութիւնն ու ղեկը իր ձեռքում պահել։ Իսկական յաղթութիւնը տարաւ Եզեանը, բայց ինչպէս կը տես-նենք՝ ուրիշ կերպով։

Ինձ համար միշտ հարց է եղել, արդեօք կարող էր Եզեանը Պօլսի ուսումնարանը այնպէս ղեկավարել, որ այն մնար որպէս զուտ ազգային հաստատութիւն։ Թէ նա ար աստիճանի ճարտար դիւանագէտ էր, այդ ապացուցեց Էրզրումի Սանասարեան ուսումնարանով։ Նա Պետրօգրադ նստած տեղովը հեռւից այնպէս ղե-կավարեց այդ հաստատութիւնը, որ կարողացաւ Սգիլ-լայի և Ամերիկեի խոչերից ու խուերից թաւանդը ամե-նայն զգուշութեամբ զերծ պահել և հասցնել նաւա-հանգստին. ոչ տաճկաց տէրութիւնը կասկածներ և տրտունջ յայտնեց այդ ուսումնարանի դէմ, և ոչ ռու-սաց դիւանագիտութիւնը ծանրացաւ ուսումնարանի ներքին կազմութեան վրայ, այլ այն մինչև վերջը մնաց որպէս զուտ ազգային հաստատութիւն։ Եզեանի տարած յաղթութիւնը հէնց այն էր, որ իր ձեռքից բաց չը թողեց ղեկավարութիւնը մինչևի մահը։ Նա նրա համար ստեղծեց կատարեալ ազատ զարգա-նալու հնարաւորութիւն։ Իսկ եթէ այնուամենայնիւ յետոյ ուսումնարանի գլխին ամպեր կուտակւեցան, այդ բանի համար նա ամենից քիչ պատասխանատու պիտի համարւի։ Բայց այս կէտը պատմութեան քննելի հանդամանք է, ուստի և մենք այստեղ վերջակէտ կը դնենք։

Սեդրաք Մանդինեան

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳՈՒ ՎԵՐՍՏԻՆ ՄԱՐՄՆԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

I.

Թէ արդի և թէ հին փիլիսոփայութեան մէջ չը կայ մի խնդիր, որ այնքան վիճաբանութիւնների առարկայ եղած լինի, ինչպէս հոգու անմահութեան խնդիրը։ Մարդկային միտքն իր զարգացման օրից մինչև այժմ շարունակ զբաղւել է այդ խնդրով, շարունակ դրա մասին թեր և դէմ կարծիքներ են յայտնել. իւրաքանչիւր գիտնական կարծել է, թէ ինքն արդէն լուծել է այդ դորդեան հանգոյցը, սակայն իրօք դրանցից ոչ մէկը չէ կարողացել վերջնական կերպով վճռել այդ առեղծւածը և հոգու անմահութեան խնդիրը կարելի է ասել գտնւում է այնպիսի անորոշ դրութեան մէջ, որպիսի դրութեան մէջ գտնւում էր մի քանի հազար տարի առաջ։

Հոգու անմահութեան վերաբերմամբ փիլիսոփայութեան մէջ երկու ուղղութիւն կայ։ Դրանցից մէկը մարդու մէջ ոչ մի առանձին զօրութիւն՝ հոգի չէ ընդունում և մարդու բոլոր հոգեկան ընդունակութիւնները վերագրում է ոչ թէ հոգուն, այլ նիւթի (materia) զօրութեանը։ Այս ուղղութեան մարդիկ կոչւում են մատերիալիստներ կամ նիւթապաշտներ։ Ապա հակառակորդները կոչւում են սպիրիտուալիստներ, որոնք ընդունում են անմահութիւնը և մարդու բոլոր այն ընդունակութիւնները, որոնցով նա տարբերւում է կենդանիներից, և որոնց շնորհիւ կոչւում է կենդանական աշխարհի թագաւոր, վերագրում են հոգու զօրութեանը։

II.

XIX դարում, երբ քիմիայի շնորհիւ մատերիալիզմն իր զարգացման գագաթնակէտին հասաւ դրա հետ միասին առնթեր կերպով սկսեց զարգանալ նաև սպիրիտուալիզմը և որքան առաջինի հետևողներն աշխատում էին հերքել հոգու անմահութիւնը, երկրորդի հետևողներն ընդհակառակն էին ապացուցում։

Սպիրիտուալիստներն իրենց վարդապետութիւնը պաշտպանելու համար սկսեցին ընկերութիւններ կազմել, թերթեր հրատարակել, դասախօսութիւններ կարդալ, ուսումնասիրել կեանքի մէջ տեղի ունեցող այն խորհրդաւոր երևոյթները, որոնք գիտական ոչ մի տեսութեամբ չեն բացատրւում և կամաց-կամաց հետևողների սուար բազմութիւն ձեռք բերեցին։ Թէ սպիրիտուալիզմը որքան առաջ գնաց, այդ երևում է նրանից, որ նրանով զբաղւել են և զբաղւում են նշանաւոր, փիլիսոփաներ ու գիտնականներ, օրին. հռչակաւոր աստղաբաշխ Կամիլ Ֆլամարիոնը, Կանտը, Ակսակովը, պրօֆ. Մենդելէևը և այլն։

Դորա մէջ ամենանշանաւոր տեղը բռնում է Կ. Ֆլամարիօնը, որ հոգու անմահութեան և Աստծոյ գոյութեան մասին բազմաթիւ գողտրիկ և գիտութիւնը ֆանտազիայով համեմած գրաւոր աշխատութիւններ ունի։ Ո՞վ չէ կարդացել նրա սքանչելի Ուրանիան*), Ստելլան, Լումէնը, անսահմանութեան մասին զրոյցները և այլն գրքերը։ Որքան հրաշալի կերպով նա այդ գրւածքներում գիտական տեսութիւնների հիման վրայ ապացուցում է Աստծոյ գոյութիւնը, հոգու անմահութիւնը, վերածնութիւնը և մարդու կեանքի նպատակն ու նշանակութիւնը։

Այս կողմից ոչ մէկ սպիրիտուալիստ չէ կարող հաւասարւել Ֆլամարիօնին, որովհետև նրա դատողութիւնները հիմնւած են ոչ թէ դատարկ խօսքերի, այլ գիտական տեսութիւնների վրայ։ Նրա գրւածքներից դէպի բարձրագոյն էութիւնը և հոգու անմահութիւնն այնպիսի ջերմ հաւատ է բուրում, որ դժւար գտնւի մի մոլեռանդ մատերիալիստ, որն ուշադրութեամբ նրա գրւածքները կարդալուց յետոյ ակամայ չը վարակւի աստւածապաշտութեան ջերմ զգացմունքով և հեղինակի հետ ծունկ չը չոքի երկնքի ու երկրի Արարչի առաջ։ Ի զուր չէ, որ Ֆլամարիօնին անւանում են XX դարի Պօղոս առաքեալ։

III.

Ինչպէս Ֆլամարիօնի, նոյնպէս և միւս հեղինակաւոր սպիրիտուալիստների գրւածքներից երևում է որ սպերիտուալիզմը թէև շօշափում է շատ կրօնական հարցեր, սակայն ժամանակակից ոչ մի գիտութեան թշնամի չէ, բացի մատերիալիզմից և ընդունում է գիտական բոլոր տեսութիւնները։ Սակայն Աստուածաբանական գիտութիւններից մի քանի հարցերում բոլորովին տարբերւում է։ Այդ հարցերից գլխաւորներն են Քրիստոսի երկրորդ գալուստը, մեռելների յարութիւն առնելը և յաւիտենական տանջանքի ու երանութեան դատապարտութիւնը, որոնց մասին սպերիտուալիզմն ունի իր առանձին հայեցակէտը։ Այս բոլորի փոխարէն, սպերիտուալիզմն ընդունում է միմիայն հոգու վերստին մարմնանալու տեսութիւնը։ Նա չէ ընդունում, որ ամենազօրի Աստւած, որի արեգակն լոյս է տալիս թէ արդարներին և թէ մեղաւորներին ընդունակ լինի մարդկանց յաւիտենական տանջանքի դատապարտելու, որովհետև նա ոչ թէ մեղաւորի մահն է ցանկանում, այլ նրա չար ճանապարհից դառնալը և ուղղութեան գալը։ Բայց Աստւած մեղաւորին ուղղում է ոչ թէ նրան յաւիտենական տանջանքի դատապարտելով, այլ մեր երկրագնդի կամ ուրիշ մոլորակների վրայ կրկին մարմնացնելով, ուր նրա կեանքի պայմանները հետզհետէ փոխելով և զանազան փորձութիւնների ենթարկելով, նրան առաքինութեան մէջ կատարելագործում է և արատներից մաքրում։ Այն մոլորակները որոնց վրայ յանցաւոր հոգին մարմնանում է մեր երկրագնդի նման բիրտ կեանք ունին, կան նոյնիսկ այնպիսիները, որոնք երկրագնդից աւելի վատ են։

Այս մոլորակների վրայ իր ապաշխարութիւնը քաշելուց յետոյ հոգին արժանանում է ներման և այնուհետև մարմնանում է աւելի զարգացած և հոգեկան կեանք ունեցող մոլորակների վրայ։ Մարդու կրած տանջանքները և ձախորդութիւնները ըստ սպերիտուալիզմի պայմանական նշանակութիւն ունին, այն, ինչ որ մարդ ձախորդութիւն, տանջանք է համարում, իսկապէս նրանք ծառայում են նրա հոգեկան կատարելագործութեան, ինչպէս դաւը դեղը հիւանդի առողջութեանն է նպաստում։

*) Ուրանիան ապւած է Swarազում Հ. Առաքելեանի թարգմանութեամբ և ապա առանձին գրքով։

IV.

Հոգու վերստին մարմնանալու տեսութիւնը թէ փիլիսոփայութեան և թէ աստուածաբանութեան մէջ նորութիւն չէ։ Հին եգիպտացիները հաւատում էին այդ բանին միայն զանազանութեամբ, որ նրանք ընդունում էին, թէ մարդու հոգին կարող է մարմնանալ կենդանիների մէջ, մինչդեռ սպերիտուալիզմը մարդկային մարմինը բոլոր կենդանիների մարմիններից՝ աւելի բարձր դինամանցիա համարելով, չէ ընդունում, որ մարդու հոգին մարմնանայ կենդանու մէջ։

Սպերիտուալիստները հոգու վերստին մարմնանալու տեսութեան հաստատութիւնը տեսնում են և Քրիստոսի Նիկոդիմոսի հետ ունեցած խօսակցութեան մէջ, ուր ասած է, թէ մարդ մինչև վերստին չը ծնուի, չէ կարող երկնքի արքայութիւնը մտնել։ Ճիշտ է, աստուածաբաններն այդ խօսքերը վերագրում են բարոյական վերածնութեան. մանաւանդ երբ Յիսուսն աւելացնում է, թէ մարդ պէտք է վերածնուի հոգուով, ուր ջուր խօսքը մկրտութեան տեղ են ընդունում. սակայն Յիսուսի խօսքերի մէջ մկրտութեան մասին ոչ մի ակնարկ չը կայ, այլ նրա խօսքերը սովորական ջրին են վերագրում։

Բայց մի՞թէ Յիսուսը ջրին այդպիսի հրաշագործ զօրութիւն կարող էր վերագրել։ Հարկաւ ոչ։ Այստեղ ջուր ասելով պէտք է հասկանալ այն, ինչ որ այժմ գիտութեան մէջ կոչւում է «մատերիա», որից գոյութիւն առած են համարում բոլոր գոյութիւն ունեցող մարմինները և այդ այն պատճառով, որ այն ժամանակ փիլիսոփայութեան մէջ ջրին այն յատկութիւնն էր վերագրւում, ինչ որ այժմս մատերիային։ Սրանից պարզ հետևում է, որ Յիսուսի ջուր խօսքը համապօր է մարմին խօսքին, այսինքն երկնքի արքայութիւնը մտնելու համար հարկաւոր է, որ մարդ նորից հոգուով և մարմնով ծնուի։

Յիսուսի այս տեսութիւնը հաստատւում է նրա յետագայ խօսքերից, ուր նա Նիկոդիմոսին պախարակում է ասելով, թէ դու Իսրայէլի մէջ վարդապետ, գիտնական մարդ ես համարւում և այս բանը չե՞ս հասկանում։ Յիսուսն ինչու էր պախարակում Նիկոդիմոսին իր խօսքերը չը հասկանալու առթիւ։ Որովհետև հրէաները 400 տարի Եգիպտոսում ապրելով՝ հոգու վերստին մարմնանալու տեսութեան հետ ծանօթ էին և նոյնիսկ շատերը հաւատում էին դրան, որի մասին մարգարէութիւնների մէջ շատ ակնարկներ կան. նոյնիսկ Մովսէսն այս բանին հաւատացողներին և սպիրիտիզմով պարապողներին մահուան պատիժ է նշանակել։

Յիսուսն այս տեսութիւնն աւելի լուսաբանում է, մարդուն նմանեցնելով քամուն, որ յայտնի չէ, թէ որտեղից է գալիս և ուր է գնում, աւելացնելով, որ միայն ինքը գիտէ, թէ որտեղից է և ինչի համար է եկել և ուր է գնալու։

Բացի այս դէպքից վերստին մարմնանալու տեսութեան հաստատութեանը կարելի է վերագրել և այն, որ Յիսուսը Յովհաննէս Մկրտչի և Եղիա մարգարէին միևնոյն անձնաւորութիւնն էր համարում։

Բացի եգիպտացիներից մարդկային հոգու վերստին մարմնանալու տեսութեանը հաւատում են մինչև այժմ բրահմիականները։

Հայերի մէջ ևս տեսութեանը հաւատում էին Մանիքեցի կոչած աղանդաւորները։ Նոյնիսկ հասարակ ժողովրդի մէջ մինչև այժմ շատ փորձած մարդ[illegible] ասում են. թէ նա «յետ եկած է», այսինքն այդ մարդն այնպէս փորձած է, որ փորձութիւնը նա չէր կարող ներկայ կեանքում ձեռք բերած լինել, այլ նա գնացել է հանդերձեալ կեանքը և յետ եկել, նորից ծնուել։

Քրիստոնէական եկեղեցին առաջին դարերում աւել է հռչակաւոր եկեղեցական հայր Օրիգինէսին, որը ոչ միայն հաւատում էր վերստին ծնուելու տեսութեանը, այլ և ճգնում էր ապացուցել, որ Քրիստոսը յարութիւնից յետոյ մարդկային բիրտ մարմին չէ ունեցել, այլ փլիւիդական՝ եթերական մարմին, ապա թէ ոչ նա չէր կարող փակուած դռներով ներս մտնել։

V.

Այժմ դառնանք դէպի վերստին մարմնանալու կամ ծնուելու տեսութեանն ըստ էութեան։

Մեզնից շատերը երբեմն համոզւում են մի անդրդուելի համոզմունքով, թէ իրենք այս ինչ տեղն առաջուց տեսել են, այն ինչ իրենց էլ քաջ յայտնի է, որ այդ մարդուն կամ տեղը առաջին անգամ են տեսնում։

Այս երևոյթը, ի հարկէ, հալլիւցինացիայով չէ կարելի բացատրել, որովհետև եթէ այսպէս դատենք, այն ժամանակ պէտք է ընդունենք, որ բոլոր մարդիկ վարակուած են այդ հիւանդութեամբ։

Միակ տեսութիւնը, որ կարող է դոյնանման երևոյթները բացատրել, դա մարդկային հոգու վերստին մարմնանալու տեսութիւնն է։ Նոյնպէս այդ տեսութիւնով կարելի է բացատրել կեանքի մէջ տեղի ունեցող բազմաթիւ երևոյթներ, որոնք գիտնական ոչ մի տեսութեամբ չեն բացատրւում։ Օրինակ. վերստին ծնուելու տեսութեամբ կարելի է բացատրել, առաջին. թէ ինչո՞ւ միևնոյն ընտանիքի անդամները, որոնք ֆիզիքապէս միմեանց շատ նման են, մտաւոր և բարոյական յատկութիւններով ու բնաւորութեամբ միմեանցից յաճախ բոլորովին տարբերւում են. երկրորդ՝ թէ ինչո՞ւ Շէքսպիրի նման անհատական սահմանափակ փորձառութիւն ունեցող անհատները կարող են նկարագրել մարդկային բնութեան այնպիսի կողմերը, որ նրանք չեն ուսումնասիրել և երրորդ՝ թէ ինչու կան երեխաներ, որոնք իրենց հասակին անհամապատասխան կերպով են զարգացած և փորձառած։

Ց. Վարդանեան

(Կը շարունակուի)

Գարնանային թռչուններ

ՈՒՐ Է ՍԼԱՆՈՒՄ ԱՆԴՐԱՆԻԿԸ ԵՒ ԻՆՉՈՒ

«Մեռէք ու մի ղղջաք, որովհետև պանծալի բան է՝ մեռնել հայրենիքի համար...»

ՀՈՄԵՐՈՍ

Ազգ կայ ամեն տեղ, ուր՝ ինչպէս ասում է Ռընան՝ կայ դարաւոր մի անցեալ, հիւսւած ճիգերից ու զոհողութիւններից, ուր կայ մի անցեալ՝ փայլուն, հերոսական սխրագործութիւնների, ուր կան պատմական աւանդութիւններ... Այն հոիւները, որ դարերի ընթացքում մղել է մի համայնք ընդհանուր թշնամու դէմ, այն ուրախութիւնները, որ նա ունեցել է յաղթանակներից, այն տառապանքները, որ նա ունեցել է պարտութիւններից, այն երգերը, որ նա հիւսել է յաղթանակների ու պարտութիւնների առթիւ,—ահա այդ վսեմ համերաշխութեան անունն է ազգ, իսկ այն երկիրը՝ ուր նա է ապրում՝ հայրենիք։ Տես, հայն էլ որպէս ազգ ունի իր հայրենիքը, որից զուրկ է, որից բաժանւած է։ Այդ հայրենիքի համար է, որ տասնեակ տարիներ շարունակ՝ կռիւ է մղում հայը՝ բռնակալ, արիւնածարաւ սուլթանների դէմ. այդ հայրենիքի պատճառով է, որ հազարաւոր գոհեր է տւել ու պիտի տայ, մինչ ազատւի բռնակալի ճիրաններից։ Բռնութեան, ճնշման ու հալածանքի երկրում են ծընւնդ ու սնունդ առել հազարաւոր քաջեր, որոնցից ականաւորներն են՝ Անդրանիկ, Սեպուհ, Մուրադ, Քեռի, Գէորգ Զաւուշ, Վահան և այլն, որոնց քաջութիւնները յայտնի են ոչ միայն հային, այլ և այլազգիներին։ Օրինակ. Անդրանիկի քաջագործութիւնները ձւմ յայտնի չեն, ով չէ լսել նրա խելացի և հմուտ զինուորականի ձիրքի մասին։ կամ որ հային ծանօթ չեն այս տողերը՝

Դալուորիկցի լաճ եմ քաջ,
Չեմ տեսեր ոչ արօր ոչ մաճ,
Ջարոց, լերանց եմ ազատ լաճ,
Չեմ խոնարհիր Թուրքին առաջ։

Հէնց այդ լերանց ըմբոստ Թուրքին առաջ չըխոնարհող լաճն է, որ մեծանուն յայտնի հերոս է դարձած։

Հայրենասէր քաջամարտիկ
ԱՆԴՐԱՆԻԿ

Եւ դա Անդրանիկն է։ Նա մասնակցել է Սասունի մի շարք կռիւների, որոնց թիւը 20-ի է հասնում, և բոլորի մէջ էլ ցոյց տւել իր բնածին քաջութիւնը։ Նա մասնակցել է բոլգարական պատերազմին և արժանացել շքանշանների. այժմ էլ մասնակցում է ռուս-տաճկական պատերազմին, որը յայտնի է հայ ընթերցողին։ Նա ընթանում է առաջ դէպ այնտեղ, ուր կարմիր արեան գետեր կը հոսին, ուր պղծւած են եկեղեցիները, ուր բռնաբարւած են կոյսերը, ուր գլխատւած են տղամարդիկ, ուր ոտնահարւած է պատիւը, կրօնը, ազատութիւնը, ճշմարտութիւնը և բոլորը, բոլոր ինչքը հայ ազգի։ Դէպ այնտեղ, արեան ովկիանոսը, բռնութեան ասպարէզն է արշաւում՝ խորտակելու բռնութիւնը, ցամաքեցնելու արիւնը և նոր կեանք, նոր հայրենիք, ազատ Հայաստան ստեղծելու, այ թէ ուր է արշաւում Անդրանիկը և ինչու։

Ա. Թոփչեան

Դաշնակցութեան անվեհեր զօրագլուխ ԱՆԴՐԱՆԻԿԸ իր յաղթական զինակիցներով։

Մեր արիւնակից փախստականների պատիճն ենք ներկայութեամբ զաւակական Թաթախման Դրական-Դեղագիտական Սալօնում Հ. Տ. Բենիկ վարդապետի ճառը։

Տարագիր եղբայրներ ու քոյրեր, մեր շատ սիրելի հիւրեր, «Մեզ եւ ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեաւ ի մեռելոց».

Քրիստոնէական համաշխարհային այս մեծ ուրախութեան օրը գիտեմ ձեր հոգին արիւնոտւած, ձեր սիրտը վշտով լի, ձեր աչքն արցունքով է ծովացած։ Ջարթել են ձեր յիշողութիւնները անցած քաղցր օրերի վրայ, երբ դուք ձեր օջախների մէջը խմբւած, եբեկոյեան ճրագների շողերու տակ ձեր որդոց ու հարազատների հետ մէկտեղ Ձրագալոյցի Քաթախման հացն էիք վայելում, ուրախ սրտով հայի Զատիկը տօնում։

Հնչակեան I խմբի կամաւորները իրանց առաջնորդով։

Իսկ այժմ բաղդի դառն շնչով բարձրացած փոթորիկը, բարբարոսների մերկ սուրը ձեզ հալածական դարձնելով օտար աշխարհ շպրտեցին։ Դուք յիշում էք անշուշտ ձեր բրիշակ դարձած տունը, ձեր պարտէզն ու այգին, ձեր ամացած արտերը, ձեր սիրուն ծաղկավառ հայրենիքը, ձեր գառն ու մագին։ Ձեր երևակայութիւնից, ձեր աչքերից չեն հեռանում ձեր տան փլատակների տակը գերեզման գտած սիրելիները, բաժանման սոսկումով լի վայրկեաններն, ճանապարհների վրայ թերևս անթաղ ընկած համբուրելի դիակները...

Ձեր վշտով համակուած ենք և մենք, ձեր կսկիծը և մեր հոգին է այրում և մենք մխացող հոգով խոնարհում ենք ձեր մեծ վշտի առաջ։

Ձեզ և մեզ պէտք է մխիթարի, վհատութեան անդունդից հեռու պահի մեր քրիստոնեայ պապերի այն հզօր հաւատը թէ՝ չարիքը վերջ ունի։ Ձեր այսօրւայ ճաշակած դառնութիւնը դարերով ճաշակել են մեր խաչակիր նախնիք այն օրւանից, երբ Գողգոթայի Աչէին ու Աչեցեաւլին որդեդիր դարձան։ Գարերով մեր խաչը շալակած գնացել ենք կեանքի ճանապարհով ու մեր ուղին գծել արիւնով ու արցունքով. բայց դարձեալ կենդանի մնացել. խաչը լոկ խօսք չի եղել հայի համար, այլ տոկունութիւն, զօրութիւն, որի շնորհիւ մենք կարողացել ենք մեզ հալածող, մեզ խաչող անարգների գերեզմանների վրայ արհամարհական հայեացք ձգել ու անցել։

Խաչը խորհուրդ ունի, բարուն, գեղեցկի, ճշմարտութեան վրայ հաւատ ունեցող խաչեալը յարութեան յոյս ունի, իր ազատութեան սուրը Զատիկն ունի։

Այս հաւատը այս գիտակցութիւնը Յիսուսի Աչէի զօրութեամբ թող ձեր մխիթարութիւնն ու սփոփանքը լինի։

Թող ձեր մխիթարութիւնն ու սփոփանքը լինի և այն գիտակցութիւնը, որ դուք, մեր սիրելի հիւրեր, ձեր արիւնակից ձեր սրտացաւ եղբայրների և քոյրերի մէջն էք գտնւում այսօր, թէև հայրենիքից դուրս, օտար գաղթավայրում։

Ձեզ հետ այսօր Զատիկ տօնելը մեզ հոգեկան մեծ հաճոյք է պատճառում։

Ձեր ամենուդ Զատիկը շնորհաւորելով, մենք ձեզ համար այս բարի ցանկութիւնն ունինք, այս բարեմաղթութիւնը՝ երբ անօրէնութեան կատաղութիւնն անցնի, դուք բարով վերադառնաք ձեր հայրենի երկիր, մեր ամենիս խնկելի հայրենիքը. այնտեղ մեզ համար դարերի յիշատակներ կան, այն սրբազան հող ու ջրի մէջ կենդանարար հոգի կայ, հայ խաչեցեալը այնտեղ յարութիւն կառնի։

Ուրեմն երբ ձեր աչքերի ամպլն ու ցօղը հեռանան, ձեր հայեացքը դէպի հայրենիք, ձեր թիկունքը դէպի օտար աշխարհ դարձրէք. չը հրաժուրւիք օտարի ոսկեզօծ պալատներով, որ ձեզ համար լոկ մի փայլուն դագաղ է, ձեր օճախի մրոտ յատակները վեր դասեցէք այս պալատներից...

Ձեր կենացը, սիրելի հիւրեր, շնորհաւոր ձեր Զատիկ, «մեզ և ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Բենիկ վարդապետ

ԳԱՐՆԱՆ ՍԿՁԲԻՆ...

...— Արդեօք, յիշում ես, այն օրը, որ ընկերուհուդ հետ պատահեցիր ինձ, քաղաքի մարդաշատ փողոցներից մէկում։

Գարնան սկիզբն էր, սիրուն երեկոյ, օդը բուրում էր գարնան նորաբաց ծաղիկների և այլ բոյսերի անուշ բուրմունքով։

Բայց որքան գեղեցիկ է գարունը...

Բացւած էր գարնան առաջին ծաղիկը, առաջին կարապետը, բոլոր ծաղիկների սիրելի, համեստ և թախծոտ մանուշակ քոյրը...

Ես մանուշակ շատ եմ սիրում, ուստի այդ օրը, մի փունջ գնել էի ծաղկավաճառից և կրում էի կըրծքիս, ապրում նրա անուշ հոտով։

Ա՜խ, այդ ժամ էր, որ ընկերուհուդ հետ անցար իմ մօտով և քաղցր բարևներով ասացիր.

— Ի՜նչ սիրուն փունջ է» և անցար։

—Ինդրեմ,—ասացի ես և յետևեցի։

— Շնորհակալ եմ,—ժպտալով յետ նայեցիր և նորից սկսեցիր քո ճանրան. բայց ես ուղում էի, որ ծաղկէ փունջը քեզ նւիրեմ, կուրծքդ զարդարեմ ու հեռուից-հեռու նայեմ, հրճւեմ, ապրեմ ու ապրեմ...

Մի պահ ինձ մոռացայ և յանկարծ կոչեցի.

— Արուսեակ...

Դու իսկոյն յետ դարձար և պալկացած ասացիր.

— Լաւ. տուր...

Նայեցինք իրար աչքերի մէջ. փունջը առար ձեռիցս և...

— Շնորհակալ եմ,—ասելով՝ անցար, հեռացար։

Մանուշակի փունջը տարար, սիրոյս ծաղկունքը տարար, կեանքիս թերթերը տարար։

Ա՜խ, երանի թէ միշտ ծաղիկներ տայի քեզ, միշտ այդպէս ապրէի...

Դեռ յիշում եմ ես և պիտի յիշեմ ընդմիշտ, երբէք, երբէք չը պիտի մոռանամ այն օրը, այնքան քաղցր վայրկեանը, որ տանջւած հոգիս ապրեց, կարօտ սիրոս ժպտած նորից։

Այո, ես յիշում եմ։ Իսկ դու, դու չե՞ս յիշում. արդեօք պահում ե՞ս մանուշակները...

Երանի թէ իմանայի՜...

Տուն տանելուց ինչ արիր, ինչպէս վարւեցիր նրա հետ. դրիր ջրով լի բաժակի մէջ, դրքերի դաղտնի էջերում, թէ բուրմունքը վայելելուց յետոյ փողոց նետեցիր, կամ թէ տրորեցիր ոտերիդ տակ։

Ա՜խ, ասա, խօսի՛ր...

Իսկ եթէ դու տւած լինէիր, ես այլ կերպ կը վարւէի. կը դնէի ջրով լի ոսկէ բաժակի մէջ, դիշեր ցերեկ բոյրը կը վայելէի և թառամելուց յետոյ կը չորացնէի և կը պահէի կրծքիս վրայ։ Իսկ յետոյ.— յետոյ ինձ հետ գերեզման կը տանէի...

Ես լաւ յիշում եմ, դեռ թարմ է մտքիս մէջ։

Իսկ դու, չե՞ս յիշում։

— Ո՜չ...

— Ափսոս...

— Մանուշակները չե՞ս պահում։

— Ո՜չ...

— Անգութ, անսէր. անծաղիկ...

— ...

Դանիէլ Ղազարեան

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆ

(Մահուան տասնամեակի առթիւ)

Հայ հոգեւոր երաժշտութեան վերանորոգիչն ու բազմածայն—ներդաշնակեալ երգեցողութեան հիմնադիրը։

Ուղիղ տաս տարի սրանից առաջ, 1905 թւի մարտի 5-ին Թիֆլիսի Հալէպեան քաղաքամասի մի յետ ընկած փողոցում, մի աղքատիկ տան մէջ իր վերջին շունչը փչեց—հայերիս մէջ բազմաձայն և ներդաշնակ երգեցողութեան հիմնադիր, հոգեւոր երաժշտութեան վերանորոգիչն ու նրա թագն ու պարծանքը —Մակար Եկմալեանը։

Կորովի և մեծ էր Եկմալեանի տաղանդը. այդ ճանաչուած ու գնահատուած է յայտնի երաժշտագէտների կողմից։ Մեր ազգն է, որ իր՝ արժանաւորագոյն, օտարների կողմից բարձր գնահատուած զաւակներին գնահատելու ընդունակութիւնը վաղուց է կորցրել։

Եկմալեան ծնող ազգը նրա նման էլի շատերը կարող է ծնել և ծնում է, բայց այս վերաբերմունքը տեսնելով՝ նրանք մեզ համար չեն ապրի և չեն ապրում։ Հայաստանի հողը, Հայաստանի տիրքները կարծես չեն կարողանում, յաճախ՝ չեն կամենում Եկմալեաններին և նմաններին սնունդ տալ։

Եկմալեան՝ օտարների շրջանում գործելով՝ ժամանակի ընթացքում մի մեծութիւն կարող էր դառնալ բայց նա իր ազգին ծառայելը գերադասեց ամեն օտար փառքից։

Նրա կրծքում հայի սիրտ էր բաբախում, նա Մասիսի և Էջմիածնի հարազատ զաւակն էր և վերջապէս հոգելոյս Գէորգ Դ. ազգասէր կաթողիկոսի որդեգիրն էր, ուստի և նախապատիւ և բարոյական պարտք համարեց իր ազգին ծառայել։



ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
Մակար Եկմալեան

** * **

Գէորգ Դ.-ը Կ. Պոլսից ս. Էջմիածին է հրաւիրում երաժշտապետ և քաջ ձայնագէտ Նիկողայոս Թաշճեանին և նրան է յանձնում զանազան քաղաքներից Էջմիածին կանչուած ուշիմ և քաջաձայն դպիրներին՝ ձայնագրութիւն սովորեցնելու համար։ Այդ աշակերտների թւում լինում է և վաղարշապատցի դպիր Մակար Եկմալեանը։

Շուտով Եկմալեանը այնպիսի հմտութիւն է ձեռք բերում, որ Նիկ. Թաշճեանը նրա և Պօղոս վարժապետ Ճէպէճեանի մասնակցութեամբ ձայնագրում է շարականը։ Մօտ 1100 մեծադիր երեսից բաղկացած այդ ահագին գիրքը՝ ձայնագրութեան նախընթաց երկն էր, Գէորգ Դ.-ի մեծագործութիւնը և Էջմիածնի ու իր գործակիցների յոգնատաժան աշխատութիւնը, որ լոյս տեսաւ 1875 թւականին նորահնար հայկական ձայնանիշներով—խազերով (նօտա)։ «Սոյն այս նախանձաւորութիւն հոգելոյս կաթողիկոսին ի կարգաւորել զերգեցմունս եկեղեցւոյ մերոյ՝ օրինակ բարի և յորդոր եղև...) որ ի մանկութենէ անտի վարժեալ ի հրահանգս երաժշտութեան ի վանս ս. Էջմիածնի առ կենդանութեամբ նորա՝ ալև բարւոյ մասին դիպեցաք՝ ընդ ձեռամբն և ղեկավարութեամբ նորին վաստակել մերովսանս ի ձայնագրութեան շարականաց, երգեցողութենանց սրբոց պատարագին և բովանդակ ժամագրոյն, որք նորին հրամանաւ ի լոյս ընծայեցան ի ս. Էջմիածինն». (Ցառաջաբան Եկմալեանի)։

Հոգեւոր երաժշտութեան բարեկոչման գործն արդէն սկսուած էր. բայց դա մի փորձ էր։ Հոգելոյս հայրապետը մեծ գործի սերմը ձգեց, շարունակելու և այդ սերմից մի փառաւոր բուրաստան ստեղծելու պատիւը վերապահուած էր նրա ամենաընդունակ և աշխատասէր սանիկին—Մակար Եկմալեանին։

** * **

Քաջավարժ Եկմալեան իր արտակարգ ընդունակութիւններով արժանացաւ վեհափառի բարձր ուշադրութեան—նա ուղարկեցաւ Պետրօգրադ. այնտեղի կոնսերւատորիայում երաժշտական արուեստի մէջ կատարելագործելու համար։

Տաս տարուց աւելի ապրելով Պետրօգրադում և բազմակողմանի կերպով ուսումնասիրելով երաժշտական արուեստը իր բոլոր ճիւղերով համաշխարհային երաժշտապետներ Ռուբէնշտէյնի և Զայկովսկու ուսուցչութեան օրով, և իբրև կովկասցի մի պիւզացի հայ հրիտասարդ, ռուսաց լեզուին էլ գրեթէ անտեղեակ՝ նա միանգամայն զարմանք է առաջ բերում երաժշտապետների շրջանում իր երաժշտական անվիճելի տաղանդով և առանձնապէս իր երաժշտական հազուադիւտ նուրբ լսողութեամբ։

1887 թուականին աւարտեց կոնսերւատորիան, իբրև ամենայաջողակ շրջանաւարտ և եկաւ իր հայրենի երկիրը՝ իր մայրենի եկեղեցուն ծառայելու, մի կարճ ժամանակ սակայն վարելով Թիֆլիսի կայսերական հրաժշտական ուսումնարանի վերատեսչի պաշտօնը։

Իր բարերար Գէորգ Դ. Հայրապետը վախճանուած էր արդէն։ Հայկական եկեղեցական երգեցողութիւնը բարեկարգելու համար սկսած նրա մեծ գործը պէտք էր շարունակել։

Երաժշտական լուրջ և բազմակողմանի կրթութիւն ստացած և անագին պաշար ձեռք բերած Մակար Եկմալեան իր մեծ բարերարի օգտակար ծրագրներն իրագործելը տեսնում էր ներդաշնակ, բազմաձայն երգեցողութեան մէջ, որովհետև մեր հոգևոր միաձայն երգերն ինչքան էլ ախորժալուր լինէին՝ չէին կարող մեր օրերում մեր ճաշակին բաւարարութիւն տալ։ Ուստի և 1891 թուին հրաւիրուելով եկեղեցական երգեցողութեան դասատու Ներսիսեան դպրանոցում՝ ձեռնամուխ եղաւ դեռ ևս Պետրօգրադում իր ներդաշնակած պատարագի արարողութեանց վերամշակման գործին։ Եւ նա շուտով դարձաւ մեր հոգևոր երաժշտութեան թագն ու պարծանքը, XIX դարի հայոց «ոսկեդարի» փայլուն գործիչներից մէկը, հայ տաղանդների ընտանիքի մի պատուաւոր անդամը և այն՝ փայլուն, համայիչ շրջանը փառապանծ ու բեղմնաւորիչ դարձնողներից մէկը։

Եկմալեանը ներդաշնակում է մեր ամբողջ պատարագը իր մանրամասնութիւններով մի հատ եռաձայն՝ արական խմբի համար՝ մի հատ քառաձայն՝ դարձեալ արական, մի հատ էլ քառաձայն խառն խմբերի համար։

Այս երեք պատարագը իր յաւելուածներով պարունակուած է պարտիտուրայի մէջ, որը բաղկանում է 20+264 մեծադիր երեսներից։

«Թէպէտ և գիտէինք, ասում է Եկմալեան իր պատարագի առաջաբանում, որ ներդաշնակած բազմաձայն երաժշտութիւնը մեր եկեղեցու ոգուն հակառակ կամ անհարկի մի բան չէ, այլ երաժշտական լրութիւն, կատարելութիւն է,—բայց ձեռնարկելով մեր այս՝ սուրբ պատարագի ներդաշնակութեան գործին՝ խիստ մեծ զգուշութեամբ և երկիւղածութեամբ ղեկավարեցանք, որովհետև պարտականութիւն էինք յանձն առել անայլայլակ փոխադրել մայր եղանակները՝ եւրոպական խազի ու չափերի վերածելիս, այնպէս, ինչպէս որ տպագրած էին նրանք ս. Էջմիածնում. և այնպիսի մի ներդաշնակութիւն յօրինել, որ թէ վայելուչ լինի եկեղեցական երաժշտութեան ոգին և թէ պատշաճ լինի մեր եկեղեցական երգեցողութեան ոգուն։ Ջանացինք որքան հնարաւոր է պարզ ներդաշնակութիւն յօրինել, որովհետև այդպէս է պահանջում պարսիկ-արաբացի երաժշտութեան ոգին, որին և համակերպ է մերը, ուստի խուսափեցինք ընդհանրապէս chromatisme-ից (կիսաձայն արտաքոյ եղևէջին) և modulation-ից (եղանակի զարտուղութիւն) այլ աշխատեցինք ճեալ հաւատարիմ diatonisme-ին, եղանակի հէնց իրա եղևէջներում։ Այսպիսի զգուշաւորութեամբ ոչ-սակաւ տարիներ աշխատեցանք այս գործի վրայ շտկելով ու կոկելով գրեթէ ամեն մի նշանախեցը բազմապատիկ խորհրդածութեամբ»։

Աւարտելով իր այս գլուխ գործոցը՝ Եկմալեան կարևոր է համարում քննութեան տալ այն՝ Ռուսաստանի երաժշտական գերագոյն դատաւորներին, այն է՝ Պետրօգրադի կոնսերւատորիայի, որտեղ աւարտել էր ինքը իր երաժշտական ուսումը և կայսերական պալատի եկեղեցական երաժշտանոցին (կապելլային)։ Կոնսերւատորիայի գեղապիտական խորհուրդը և կապելլայի եկեղեցական-երաժշտական գրաքննութիւնը քննելով նրա աշխատութիւնը՝ գտնում են, որ այդ ներդաշնակութիւնները կանոնաւոր են և քաղցրալուրք և պատշաճաւոր լինելով եկեղեցու երաժշտական ոճին՝ արժանի և վայելուչ են եկեղեցու մէջ գործածութեան համար և դրատեաց արժանաւոր։ Ահա այսպիսի փայլուն վկայագիրներ է ստանում Եկմալեան յիշեալ հիմնարկութիւններից 1893 թուին յունուարին։

Երկու տարի Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում այդ պատարագը գործադրելով՝ նկատում է, որ ժողովուրդը ոչ միայն չէ խորշում, այլ ընդհակառակն ոգեզմայլութեամբ և հաճութեամբ է լսում հոգևոր երգերի բազմաձայն ներդաշնակութիւնը։ Ուստի Եկմալեանը դիմում է վեհափառ Խրիմեան Հայրիկին թոյլտուութիւն խնդրում հայոց եկեղեցիներում կիրառելու համար։

Երջանկայիշատակ Խրիմեան Հայրիկը, որ ըստ Եկմալեանի պիտի կոչի մեր եկեղեցու կանոնաւոր երգեցողութեան հիմնադիր՝ 1895 թւի յունիսի 7-ին սրբատառ կոնդակն է արձակում Պետրօգրադում Հայկական ձայնագրութեան ուսուցիչ երաժիշտ Մակար Եկմալեանի անունով։

Միաժամանակ յորդոր է կարդում ջերմեռանդ ու ճեռընհաս ազգայիններին, որ օգնեն նրան տպագրութեամբ լոյս ընծայելու այդ աշխատութիւնը յօգուտ և ի պայծառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ։

Հետևեալ 1896 թուականին այդ աշխատութիւնը տպագրւում է արտասահմանում Գր. Մելիքեանի ծախքով՝ Լեյպցիգի Բրէյտկոպֆ և Հէրտել և Վիէննայի Մխիթարեան տպարաններում, զրքին կցելով նաև իր յառաջաբանի և ամբողջ պատարագի ֆրանսերէն թարգմանութիւնները («Les shants de la liturgie Armenienne»)։ Երգերից իւրաքանչիւրը կրում է իր ասանձին համարը, որպէսզի օտարազգի նւագողի համար դիւրին լինի գտնել անմիջապէս նրա թարգմանութիւնը։

Եկմալեան իր այդ աշխատութիւնը նւիրում է իր բարերար «Հոգելոյս Գէորգ Դ. Ազգասէր Կաթողիկոսին ի յաւերժական յիշատակ»։

Պարտիտուրի հետ միասին տպագրւած են և չորս պարտիանների առանձին-առանձին։

* * *

Բացի պատարագից Եկմալեան ներդաշնակել է և ուրիշ շատ հոգևոր երգեր և շարականներ՝ երկու, երեք և չորս ձայնով՝ «Հրաշափառ Աստուած», «Ծորա-հրաշ պսակաւոր», «Սիոնի որդիք, զարթիք», «Ո՛վ երանելիդ ամենացուն», «Այսօր վերստին նորոգեցաւ քահանայական զաւազան», «Աշխարհ ամեն», «Ուրախ լեր ս. եկեղեցի» և այլն և այլն։

Եկմալեանի գործունէութիւնը միայն պատարագն ու վերոյիշեալ հոգևոր երգերը ներդաշնակելով չը սահմանափակւեց։ Նա ունի շատ աշխարհիկ երգեր ևս ներդաշնակած։ 1891 թուին Ներսիսեան դպրոցում

GLORIA VICTIS

ձայնագրութեան դասերն ստանձնելով՝ սկսեց ազգային երգեր ևս ներդաշնակել, դպրոցական և այլ հանդէսների ժամանակ երգելու համար։ Նրանցից մեզ (իբրև նրա նախկին աշակերտի) յայտնի են «Մ'եր ազգ հալածւած», «Տէր, կեցո զու զհայս», «Ոչ փող զարկինք, ոչ արծազանք», «Ո՛վ Հայոց Աստւած» «Կեցցէ Զէյթուն», «Ազնիւ ընկեր մեռանում եմ», «Ողջոյն ընդ քեզ Հայաստան», «Ո՛վ զու քարեկամ», Բոլոր այս երգերը (բացի առաջինից) երաժիշտը ներդաշնակել և սովորեցրել է դպրոցի իր խմբի երգիչներին։

Հանգուցեալը ժողովրդական երգեր ևս պիտի ունենայ ներդաշնակած։ Թէև նրան անձանօթ չէին կարող լինել հայ ժողովրդական երգերը, որովհետև ինքը հէնց այդ հայ ժողովրդի ծնունդն էր— Վաղարշապատցի, ուրտեղ նա անկասկած պիտի լինէր իր կեանքի գոնէ առաջին 25 տարին՝ բայց մենք դեռ Ներսիսեան դպրոցում ուսանելիս լսում էինք, որ նա դպրոցի գաւառացի աշակերտներից շատերին տանում է իր տուն, երգել է տալիս նրանց ժողովրդական երգեր, ապա՝ ներդաշնակում։ Բայց այդ երգերը այսօր մէջտեղ չեն երևում։ Կան ուսանողներ, թէ եկմալեան հոգեկան նոր հիւանդութիւն ստացած ժամանակ իր բոլոր անտիպ աշխատութիւններն այրել է կամ այրել է ուզեցել, բայց մի մասը կարողացել են ազատել։ Սակայն ո՛ւմ մօտ են նրանք, մինչև օրս յայտնի չէ։

1902 թ.ի գարնանը եկմալեանը հոգեկան սուր հիւանդութիւն էր ստացել։ Ամբողջ երեք տարի տանջելով, 1905 թ. մարտին վախճանւեց։

Խաչ. Տէր-Ենօքեան

ԳԷՈՐԳ ՊԱՐՈՆ-ՍԱՐԳՍԵԱՆ

Մեռաւ Պարոն-Սարգսեանը Միքայէլեան հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժանմունքում և այդ դժբաղդ մարդու մահւան շուրջը չափազանց շատ ասելիքներ ունեմ։ Սիրտս, կարծես, մի ինչոր թոյնով կուտակւեց, երբ լսեցի այդ «ոչնչին»արդէն անպէտք մարդու համար։

Նահատակւեցաւ... ասի, երբ այդ տարօրինակ մարդու մահւան լուրը հասաւ ինձ։

Փետրւար ամսի վերջերն էր, երբ դուռս զարկին և բաց դռան մէջ յայտնւեցաւ մի պարթև հասակով մարդ և առանց այլևայլութեան ասաց՝

Գէորգին վախճանւեց... Նա ուզում էր Դրամատիկական Ընկերութեան հասցէն, որ թաղման համար նպաստ խնդրի։

Դերասանը, գրողը իր մահից յետոյ նոյնիսկ իր «սեպհական դագաղից» էլ զուրկ է։

Մի փոքր ինչ մտածեցի, ով էր Գէորգին... մտաբերեցի, գլխի ընկայ, որ մեռեալ տան բնակիչներից մէկն էր, վաղուց մեռած էր արգէն...

Բայց շատերի սրտերում կը գտնւի մի զեղուն զգացմունք, յիշողութիւն չը մարած դեռ ապրող այդ տարօրինակ և սքանչելի մարդու մասին։

Ես կեանքումս այդ մարդուն հանդիպել եմ երեք անգամ և երկար տարիների ընդմիջումով և այդ հանդիպումները թողել են իմ մէջ անջնջելի հետքեր։

Տարօրինակ մարդն իմ յիշողութեան միջից չի անցել, նրա մշտազարթ, կայտառ պատկերը չի հեռացել աչքիցս։

Որովհետև ես պատահել էի մի զարմանալի կենցիկ և զարմանալի դժբաղդ մարդու հետ։ Դա մի թախծոտ, բայց լիառատ սրտից բղխած ծիծաղով բոմանտիկ էր, որ իր ներսի բուռն ապրումներով համակում էր անմիջապէս ձեզ։

† Պարոն Սարգսեան

Առաջին անգամ Պարոն-Սարգսեանին ես տեսայ իր թարմ, երիտասարդ օրերին 1886 թ. իմ ծննդավայր Ստաւրապոլ քաղաքում (Հիւսիսային Կովկաս), Ուր նա եկել էր ներկայացումներ վարելու Մատթ. Ազայեանի, Յով. Կարինեանի, Ծովակի և Վարդուհու հետ։

Սրանք ապրում էին մեր քահանայ Բէկ Փիլեանի տանը, մինք բակումն էինք ապրում այդ ժամանակ, և ես դեռ մանկութիւնից թատրոնի սիրահար՝ միշտ այդ դերասանների շուրջն էի և զանազան յանձնարարութիւններ էի կատարում։ Սարգսեանը այդ ժամանակ 22—23 տարեկան էր (նա ծնւել է Թիֆլիսում 1863 թ.) և աչքի էր ընկնում իր փարթամ արտաքինով և ժիր ու աշխոյժ բնաւորութեամբ։

Երևում էր, որ ամեն ինչ նրա ձեռքով էր կատարւում։

Առանձին տպաւորութիւն գործեց իմ վերայ, յիշում եմ նրա խաղը թատրոնում «Լիւսի Դէդիէ» պիէսում։

Խումբը խաղաց և մեկնեց Ստաւրապոլից, կարծեմ Արմաւիր։

Անցան երկար ժամանակներ՝ ես աւարտեցի միջնակարգ դպրոցը և 1893 թէ 94 թւականն էր երեւանում եմ, մեկնում եմ դպրոց, ուր այդ գիշեր Պարոն-Սարգսեանը խաղալու էր «Ջոհի փոխարէն զոհ» պիէսում Քոչարովի դերը։

Անցնում է ներկայացումը սկսելու ժամանակամիջոցը Սարգսեանը չը կայ։ Անցնում է ևս մէկ ժամ, Սարգսեանը չը կայ ու չը կայ։ Թատերասէրների մէջ խոսք է անցնում յետաձգել ներկայացումը, հասարակութիւնը իր դժգոհութիւնն է յայտնում։

Սարգսեանը չի երևում...

Ցանկարծ Սարգսեանը ժամի տասին մօտ երեւում է, բայց ինչպէս... բարձրացած տրամադրութեամբ։

Նա սիրում էր կոնծել... Ես մտածում եմ և ինչ եմ տեսնում, առաջւան հետքը անգամ չէ մնացել։

Գզգզւած, պատառոտած շորերով, վիզը վզպանի տեղ կապած մի կուշէ թէ թոկի կտոր, մաշւած, վառւում են միայն առաջւան նման սև և խոշոր աչքերը, կարծես կայծեր են արձակում։

Մօտենում բարևում եմ, դառնում եմ ոտքից մինչև գլուխը նայելով.

— Այդ ինչ ես դառել Գէորգի...

— Ոչինչ վազը կը նորոգենք, բանը դրանում չէ։

Իսկոյն զգացի, որ առաջս կանգնած էր թատրոնի ֆանատիկ մի սիրահար մեծ հոգու տէր մի մարդ։

Սիրողների շարքերում յուզում անցաւ, թէ Սարգսեանը այդ վիճակում անկարող է խաղալ։

Մի քանիսը պնդում էին, որ այդ վիճակում աւելի լաւ կը խաղայ։

Իսկ ինքը ցանկանում էր և պնդում էր խաղալ։

Վազը գնալու եմ, վազը գնալու եմ, չեմ կարող յետաձգել, ասում է նա։

Եւ խաղաց... զարմանալի եռանդով և ուժեղ։

Թատրոնը սկսեց դղրդալ, հասարակութիւնը ոգևորւած Պարոն-Սարգսեանին բեմ էր կանչում։

Ես գնացի բեմի յետև փաթաթւեցայ և համբուրւեցայ այդ տարօրինակ և տաղանդաւոր մարդու հետ։

Բայց ինչ խոր տրագիզմը կար նրա դէմքին

Նա անսահման բարի էր և մարդասէր ու ընկերասէր։

Բոլորը նրան սիրում էին։

Եւ այդ պատառոտւած շորերը, որ նա հագել էր, անշուշտ իր նորը տւած կը լինէր, բաժանած կը լինէր չունեցողներին։

Պատմում են, որ մի անգամ Պարոն-Սարգսեանը փողոցով անցնելիս տեսնում է մի մարդ, որ անվնաբարկու ցրտին գնում է դողդողալով։

Մօտենում է առանց այլևայլութեան հանում իր վերարկուն և հագցնում այն թշւառականին, իսկ ինքը դողդողալով վազում տուն։ Հազւագիւտ մարդ, անգին մարդ և մեր դերասաններին իրենց ընկերներին չափազանց «սիրող» և «օգնող», դերասաններին օրինակ ծառայելու մարդ։

Միւս անգամ Պարոն-Սարգսեանին, եթէ չեմ սխալւում մի քէ երկու տարուց յետոյ 1895 թւին պատահեցայ Նոր-Նախիջևանում։

Այստեղ նա աւելի շիկ էր, պատառոտած շորերը վրան չը կային։

Այսօրւան նման յիշում եմ մի գիշեր էր՝ Ռոստովից ես մի դերասանուհի և Սարգսեանը սահնակ նստանք և գնացինք Նախիջևան։

Սարգսեանը ամենևին չուզեց ինձ նստեցնել «կոզլայում», ինձ նստեցրեց դերասանուհու հետ սահնակում, իսկ ինքը կառապանի մօտ։

Ձմեռ էր. ձիւնը փաթիլ-փաթիլ թափում էր երկնքից։ Սարգսեանը ուրախ և զւարթ տրամադրութեան մէջ էր, ամբողջ ճանապարհին երգում ու զւարճացնում էր մեզ, ձիւնն էլ խփում էր նրա դէմքին, կրծքին։

Սարգսեանը շարունակում էր մէկ մեզ հետ, մէկ կառապանի հետ հանաքներ անել։

Երիտասարդ, վառվռուն արիւնը խաղում էր մէջը, ընութիւնը անզօր էր յաղթելու նրան։

Մենք եկանք մի շատ ինտելիգենտ և պատւաւոր ու բազմանդամ ընտանիք։

Այդ ընտանիքումն էր իմ ընկերոջս այժմ յայտնի Ռուբէն քահ. Բէկ-Գիւլեանի նշանածը։

Սարգսեանը ամենքին մօտենում ծանօթանում, ձեռքերը համբուրում և քահ-քահ սրտից առատ աղբիւր հոսելու նման ծիծաղում։ Նա բոլորին հմայեց օրիորդները դառնում էին իրանց հետևմունքը յայտնում՝

Ах какой чудный человѣк! Что за открытая душа!

Այդպէս էր Սարգսեանը, նրան բոլորը սիրում էին, նամանաւանդ օտարները և Ռուսաստանի հայերը գնահատում և սիրում էին, իսկ Կովկասում նոյնպէս երևի..., թէև այստեղ միշտ զրպանն են սիրում, լաւ մարդը, սիրտը բաց, անկեղծ և բուռը բաց մարդ մեր պնակալէզ ինտելիգենցիայի շրջանում գին չունի։

Եւ այսպիսի մարդուն չեն էլ հասկանայ այստեղի բիրտ և հաստատլուխ մեր հայկական կեանքը, և զարմանալի չէ, որ նուրբ հոգւոյ տէր, տաղանդաւոր ու հազւագիւտ հոգւոյ տէր մարդ էիր, դու հազւագիւտ հոգւոյ տէր մարդ էիր, և զարմանալի կարի և աշխատասէր։

Բայց կորար, մեր սրտերում, քեզ սիրողների և քեզ հասկացողների սրտերում, խղճի վրայ ծանրացնելով քո ողբերգու կեանքդ։

Յակովբ Գենջեան

ԴԱՇՆԱԿԱՀԱՐՈՒՀԻ ՕՐ. ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ

Սկզբնական երաժշտական ուսումը ստացել է Թիֆլիսում կայս. Երաժշտ. դպրոցում, ապա Պետրոգրադի կոնսերւատօրում, աշխատելով նշանաւոր Եսիպովային և յետոյ էլ Վիէնաում աշխարահռչակ Գոտոսկուն։ Բացի բնական երաժշտական ձիրքը, օր. Մարգարիտ Միրմանեան ունի և բնական, նոյնիսկ հազւագուտ կանանց մէջ, քնքոյշ մտորումների, զգացումների չքնաղ արտայայտութիւն։ Կատարելագործւած տեխնիկայի հետ զեղանի է օր. Մարգարիտ Միրիմանեանի, մանաւանդ, այն տեսակ նւագները, ուր հառաչն ու կսկիծը, ժպիտն ու խանդավառ սէրը մորմոքում են ունկնդրին կամ արագացնում սրտի զրգիռը։ Օր. Մարգարիտ Միրմանեանի լարերը թափանցիկ են իբրև շղարշ, դունաւոր, ուժգին հեղեղից, կարկտից յետոյ, ծիածան. ջերմ, ինչպէս մայիսեան գարնաբոյր առաւօտ։ Շնորհալի արտիստուհին կատարելապէս տիրում է իր դաշնակի բոլոր մասերին, կլաւիշներին և պեդալին։ Սրա լարերը չեն մռնչում, փոթորկւում ուժգին, այլ անդորր ու նազուկ, քնքոյշ ու եթերային են։ Դեռ շատ երիտասարդ է օր. Մարգարիտ Միրիմանեանը, նազանի և արտիստուհուն անհրաժեշտ չքնաղ պարկեշտութեան հետ ընտելացրել, իւրացրել է Վիէնի քնքոյշ ու գեղանի երաժշտագէտների մանիէրը, որ շատ ռէլիէֆ տալըերւում է գերմանականից։ Վերջինս խոր է, մասիւ, փոթորկւող ու աշխարհ սասանեցնող, մինչդեռ Վիէնականը կրում է մեղմ, մելամաղձոտ շղարշային դրոշմ։

Նոր վերադարձա լինելով իր ծննդավայրը, օր.

Մարգարիտ Միրիմանեան հրապարակ եկաւ երեք կոնցերտներում։ Նախ կայս. երաժշտակ. ուսումնարանում, ապա մարտի 10-ին սիրալիր մասնակցելով Արտիստ. ընկ. դահլիճում Հայոց Երաժշտ. Ընկ. համերգին և ապրիլի 7-ին նոյն տեղը իր յատուկ կոնցերտում։ Սպասելի էր, որ Թիֆլիսը, որ առիթ ունեցաւ կարճ ժամանակում լսելու տաղանդաւոր դաշնակահարուհուն, իր հորիզոնի վրայ բարձրացող այս արեգին, կաճապարէը նրա յատուկ կոնցերտին ըստ արժանոյն պաշտամունք կատարելու։ Բայց աւաղ և հազար անգամ աւաղ... Թիֆլիսը իր ճիրաններում խեղդամահ անել գիտէ միայն աւուշարոյր, քնքոյշ բողբոջները։

Թող միշտ մտքին պահէ շնորհալի օր. Մարգարիտ Միրիմանեանը Ցիսուսի խօսքը՝ մարգարիտը խոզերի առաջ... և մարգարեն իր գալառում ..

Բէթհովէնն ու Շոպէնն և Թիֆլիսի մարմարէ սրտերով բիւր կանայք... բնական է որ կարծր, ժայռ կրծքերին ոչ հեզահամբոյր մանուշակը, ոչ յստակ մարգարիտները սազ կը գան, այլ կեղծ փայլով ալմաստները, կոպիտ ձեռքերով յղկւած. շինծու ՝անբոյր ծաղիկները, որ բուք ու բորանին անգամ չը թառամին այդ քար սրտերի վրայ...

Օր. Մարգարիտ Միրիմանեան ապրիլի 7-ին հանդէս եկաւ իր ընդարձակ փայլով. Բէթհովէն, Շուբերտ, Շուման-Տաուչիգ, Շոպէն. Ռամօ-Գոդովսկի և սալօնային մինատիւրներ Գլազունով, Նիկոլաև նւագելով յստակ, գեղ, քնքոյշ ու արտայայտիչ։ Օր. Մարգարիտ Միրիմանեան և վիրտուոզ դաշնակահարուհի է։ Ապագայում երբ ուժեղանան նրա քնքոյշ մկանունքը, էստրադ բարձրանալիս էլ այնքան ուժգին չը բաբախէ ու չի կակծայ սիրտը, մանաւանդ իր առաջ ամայի հասարակութիւն տեսնելիս, անշուշտ սա լինելու է իրաժշտական աշխարհի պայծառ աստղերից մէկը։

Օր. Մարգ. Միրիմանեան

Կոնցերտին ստացաւ գեղագիտուհին շքեղ ծաղկեայ կողովներ, ծաղկեվիճակներ, գեղեցկայ պսակ, գոհարեղէն ու սրտընդոսա ծափահարութիւնների հետ ունկնդիրներից և հիացման հաւաստիացումներ։ Ծրագրից դուրս շընորհալի դաշնակահարուհին նւագեց պմպլած հասարակութեան համար և մի քանի ուրիշ կտորներ։

Tiga

Ապրիլի 9-ին Թիֆլիսի Արտիստ. Ընկ. Թատրոնում Բարաթովի ռուսական խմբի հետ տաղանդաւոր դերասան Վ. Փափազեան խաղաց Օթելլօ շատ փայլուն կատարելով հայերէն և Օթելլոյի դերը դադարկ թատրոնում, լծակից ունենալով ռուսական խմբի երբորդական ոյժերը։ Այս մասին և հայոց Թատրոնի մասին միւս անգամ։

Տ.

— ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ —

ԻՍԿԱԿԱՆ ԹԱԹԱՒՈՒՄՆ

Չենք կարող չարձանագրել այն հոգեկան մեծ բաւականութիւնը, որը մենք ստացանք ներկայ լինելով Թաթախման արեւկոյին այն սեղանին, որ Տ. Նազարեանի Գրական-Գեղագիտական Սալօնը պատրաստել էր հայ փախստական աշակերտների և նրանց ծնողների համար։

Այդ Արեխաներից 130 հոգի պատսպարել է Զամօյեանց ակնգետնու դպրոցը, ուր, մի խումբ ուսուցիչներ, դեկավարութեամբ աւագ ուսուցիչ Գ. Վարդանեանի, ուսումն են տալիս նրանց, հոգալով միևնոյն ժամանակ նրանց ծօնական պէտոյքը և անունդը, աջակցութեամբ Թիֆլիսի Քաղաքային Ցանձնաժողովի և Հայ Ուսուցչ. Միութեան կից կազմած մասնաժողովի։

Ու ահա Տ. Նազարեանը յղացել էր մի գեղեցիկ, եղբայրաբար միտք՝ այդ 130 մանուկ աշակերտներին իրանց ծնողներով հրաւիրել Թաթախման սեղանին։ Եւ մարտի 21-ին, շաբաթ երեկոյեան, ժամերգութիւնից յետոյ, 238 հոգի հայ փախստականներ՝ մանուկներ և հասակաւորներ, կին և աղամարդ լցւել էին Սալօնի 4 սենեակները, ուր շքեղ և փարթամ նաւակատիք էր պատրաստւած աշակերտների համար գետնին դորգերի վրայ, իսկ հասակաւորների համար՝ սեղանների վրայ։ Ոչ մի բան չէր մոռացւած. ամեն ինչ առատ էր. կար այն ամենը, ինչ որ այդ երեկոյ ամեն մի հարուստ կուննար սեղանի վրայ—սպիտակ հաց, պանիր, կարագ, կանաչի, խաւեար, ձուկն երկու տեսակ՝ տապակած և խաշած, կարմիր ձու, փլաւ՝ համեմով, քաղցրեղէն, կարկանդակ, միրգ կարմիր և ճերմակ գինի, լիմոնադ, թէյ, սուրճ։ Եւ կարծէք պաշտօնական ճաշ լինէր։ Տ. Նազարեանը պատրաստել էր շքեղ թղթի վրայ գեղանի menu, որ գրւած էր ամեն մի հրաւիրեալի առաջ, որպէսզի նա հեռը տանէ իրրև յիշատակ, որ Թիֆլիսում, Փրկչեան 1915 թ. մարտի 21-ին Զատկի Թաթախման երեկոյին, նրան, հայ փախստականներին չէին մոռացել իր եղբայրակիցները և հրաւիրել էին միասին Թաթախւել իրրև անդամ ընտանիքի։ Բայց դա բաւական չէր. Տ. Նազարեանը պատրաստել էր սիրպրիզ երեխաների համար. ամեն մի երեխայ, ինչպէս և ամեն մի հրաւիրեալ, ընթրիքից յետոյ ստացաւ ընծայ՝ մի նոր քաշկինակի մէջ զանազան քաղցրեղէն, պապիրոս և այլն։ Գէշ էր տեսնել այն անսահման ուրախութիւնը, որով համակւել էին փոքրիկ փախստականները։

Սեղանին սպասաւորում էին տիկիններ և օրիորդներ, վարժուհիներ և ուսուցիչներ, հայ երիտասարդ երգիչները և երգչուհիները երգում էին, նւագածութեամբ դաշնամուրի, հայկական երգեր. մէջ ընդ մէջ նւագում էին և երգում սազանդարները։

Սեղանի օրհնութիւնը կատարեց Բենիկ վարդապետը, մայրապետ Թայիրեանը, կոյս Երմոնէ Բերութչեանի հետ և Ռուցեան քահանան, որոնք սիրալիր կերպով ընդունել էին Տ. Նազարեանի հրաւէրը օրհնել Թաթախման սեղանը։ Ապա Բենիկ վարդապետ մի կարճ ճառով դիմեց փախստականներին։ Սրանց կողմից, Միացեալ Ընկերութեան Կարնի շրջանակի վարժարանների տնօրէն Ա. Պապաճանեան զգացւած խօսքերով շնորհակալութիւն յայտնեց ռուսահայերի կարեկցութեան և աջակցութեան համար։

Սեղանին մասնակցում էին և հասարակական ու գրական գործիչներ. որոնք բարոյական պարտականութիւն համարեցին իրանց գոհունակութիւնն ու երախտագիտութիւնը արտայայտել Տ. Նազարեանին իր գեղեցիկ գործի համար, որ մարդասիրական գործ է և պատիւ է բերում Գրական Սալօնին։

(«Մշակ» № 61) Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՊԻՐԻՆ

28 փետր. Կալկաթա

Կալկաթիոյ Հայոց Մարզասիրական Ճեմարանի—«Անի» ընկերութեան Միութիւնը խորապէս յուզած Գալուստ Ալօյեանի մահուան առթիւ, ողբում է հայրենիքի քաջ նահատակի մահը և գալիս է իր արցունքի կաթիլները նրան հետ խնդրելու Ջեմմէ, որպէսզի բարեհաճէք Ծարագի մէջ յայտնելու մեր դողուն կըսկիծները և խորին ցաւակցութիւնները։

Անկեղծ վշտակցութիւններով
Անի Աշակերտական Միութիւն
Հայոց Մարդասիրական Ճեմարանի Կալկաթա։

ՍԳԱՀԱՆԴԷՍ ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ

Գալուստ Ալօյեանի յիշատակին

Փետր. 28-ին շաբաթ երեկոյ Միութիւնս սարքից սգահանդէս մը, ի նշան յարգանքի և երախտագիտութեան—հայրենեաց արծիւին։

Լցուել էինք վարժարանիս 6-րդ դասարանը ամբողջ հայ չարքաշ ուսանողներս, համակուած խորուն կսկիծներով։ Ժողովը բացուեց պ. Տ. Իսրայէլեանի նախագահութեամբ, որ հակիրճ կերպով պարզաբանելէ վերջ սգահանդէսի կարեւորութիւնը և Ալօյեանի կեանքը, բեմ հրաւիրեց ապա պ. Արամ Երամեանին, որ յուզիչ և զգայուն լարերով—այնպէս երգեց քաջ նահատակին կեանքը—

...«կեանքեր կան, որոնք կը շընչեն եւ սակայն կենդանի մեռելներ են,
Գիւներ կան գերեզմանում, որոնք հիւլէացած են եւ սակայն կապրեն, յաւիտեան։

Հետու Մայր-Հայրենիքէից, օտար հորիզոններուն տակ, այսօր մի մռայլ վերուկան կայ փռուած, ուր դեռ երէկ իջեցուցին մաշիկներով պատւած սև դագաղ մը, դեռ նոր խաչակնքուած, նոր պատանեցած սև անդուկ մը, որու շուրջ պահ մը եկաւ, համախմբեց հայ հասարակութիւնը իր վերջին յարգանքի և երախտագիտութեան ցաւակցութիւնները արտայայտելու։

Այդ զառն ցոյցերի ասնն է, որ կը ասնենք ընկերներս. այս երեկոյ։

Կանգ առէք այսօր այդ դագաղին առջև, ով հայ սրտի հարազատ պանդուխտներ։—Պահ մը կացէք և մեզի հետ ուխտի եկէք դէպի այն շիրիմին առջև—թոյլ մը ազօթքի և կաթիլ մը արցունքի համար, որովհետև այնտեղ պառկում է հայրենեաց քաջ նահատակը, Յանասորայ դաշտի ջան ֆէտային, բռնութեան բողոքիչը—որ տոգորած հայրենիքի և ժողովրդի ապառազրութեան մեծ գործով և զինուած ամենավսեմ պարտականութեամբ բողոքեց ու կուեցաւ տաճկական ամենազարհուրելի և քրդական ամենավայրագ բռնակալութեան ճիրաններուն դէմ—յանուն օրէնքի և արդարութեան—և հրացանն գրկած գնաց այն սեաւոր երկիրը, ուր սարկութեան հառաչներն և աղեղախարշ ձայները կը լսէին, այնտեղ ուր սրտեր կարիւնէին, արիւն և արցունք կը հոսէր, և մարդիկը կը խելագնէին—Անցաւ Ալօյեան արիւնոտ այդ փշոտ ճանապարհներէն—համարձակ, անվտանդ դէպի ազատութիւն երգելով։

Եւ ահաւոր այդ կուիւ յետոյ այսօր նա էլ ընկաւ իբրև նահատակ։ Ինչո՞ւ ժողովրդի և հայրենիքի դժբախտութեան ցաւովը տոգորած—ինկաւ այն սրբազան ճանապարհին վրայ, ուր պառկած են մեր նորագոյն հերոսական պատմութեան փառքն եղող Ապրօներն ու Պետօներ, Վագդէններն ու Գուրգէններ, Տիրայրներն ու Հրայրներ,—հայ կեղի ազատագրութեան այն հարազատ զաւակները, որոնք ինկան յանուն հայ ժողովրդի և հայրենիքի վերածնութեան մեծ գործին և որոնց կողքին այսօր գնաց մրափելու Ալօյեան իր նուիրական պարտականութիւնէն վերջ, որու մահը կողբանք ու կը ասնենք, կը ասնենք որովհետև նրա կեանք վրէժի և ատելութեան մի հրաբուխ է ժողովըրդի տանջանքներին, կսկիծներին և ասխներին հանդէպ։

Ով էր սարերի այդ արծիւը։

Նա իդէալիստ մը չէր և ոչ էլ պրօպականդիստ, այլ մէկը մեր ազգային հերոսական պատմութեան այն հարազատ դէմքերից, որ գոնեպէս նկարչուած հայ սրտի բացած վէրքերէն, ալայա դէպի կուի արեան դաշտը, ժողովրդի ցաւերը բուժելու և բողոքելու սարկութեան շղթաներին դէմ—ոչ թէ խօսքով—այլ սրով, ոչ թէ թղթով, այլ կուով, որովհետև նա հերոսն էր վառօդի, թնդանօթի, ռումբի և հրացանաձգութեան, որ զէնք գիտէր խաղցնել թշնամիին դէմ, թընդանօթներ գիտէր լարել սարուկի ճիրաններին դէմ, մի հերոս, որու գրիչը սուր և թուրն էր կուի դաշտում,—մի հերոս որ լքեց ամեն վայելք և պերճանք—մերժեց իր հարազատ ծնողների աղերսանքն ու փամփուշտներու չար ոգին տակ գնաց զոհաբերութեան սեղանին վրայ, ամենավսեմ պարտականութեան համար, և տոգորած այդ վեհ ձգտումներով, քալեց դէպի զըրկանք, տանջանք և տառապանք, մտաւ բանտեր ու խոնաւ նկուղներուն մէջ։ Առանց յուսահատութեան, անվտանգ, հայրենիքի, ժողովրդի մեծութեան համար, որպէսզի հայրենիքը ազատագրւի և հղեայրները փրկուին։

Ու տոգորում հերոսական այս վեհ ձգտումներով, ալացաւ նա Վանից դէպի Մուշ, Մուշից—Սասուն, Երևան և Երևանից դէպի Յանասոր—այն ահեղ աբիւնոտ ճակատամարտին մէջ, ուր ջան ֆէտային գրոհ տւեց քիւրդ բանակին և կէս ժամուան մէջ ջնջից ամբողջ Մազրիկ գեղն։

Յուլիս ամսի քսան հինգին կատարեցէք մեր տօնը...

Ով չէ երգեր ձեզանից, Յանասորայ կարմիր արիւնոտ այդ երգը։ Ահա Գ. Ալօյեան մին էր այդ արիւնոտ կուի մասնակցող ջանֆէտայներից, ուրկէ վերջը նստաւ նա բանդերու խոնաւ նկուղներուն մէջ և այսօր դարձեալ ահեղ կուէն վերջ, ինկաւ մահուան սև փոսին մէջ, մեծ իր հերոսութեան, մարտիրոսացումին և նահատակութեան մէջ։

Ալօյեան մեռաւ և սակայն նա պիտի ապրի յաւիտեան... որովհետև հայրենիքի համար ընկնողները մեծ են։

Ծունկր եկէք ընկերներս, պահ մը հերոսաց այդ դագաղին առջև, մաշիկներ սփռեցէք, ներբողներ հիւսեցէք—որովհետև դա հայրենիքի քաջ նահատակն է, սարուրի քաջ արծիւը, որ ժողովրդի համար ծնաւ, ժողովրդին համար ապրեցաւ և մեռաւ ժողովրդին համար էլ։

Թող անոր գերեզմանը ձեր իդէալներուն ուխտատեղին ըլլայ և փառք, պատիւ այդ շիրիմին, հանգիստ իր ոսկորներին և յարգանք քեզ նահատակ ժողովուրդ, որ դեռ ծոցէդ Ալօյեաններ կը ծնես։

Ընկերներս, ինկաւ Ալօյեան արեան փշոտ ճանապարհին մէջ յանուն ժողովրդի և յանուն հայրենիքի և սակայն չը պիտանք միայն լալ ու սգալ, այլ մենք էլ կատարենք մեր պարտքը քանի որ մենք ենք վաղեան կեանքը և մեզ է վերապահւած ժողովրդի և հայրենիքի ազատագրութեան գործը։ Չը թողնենք որ սկսւած գործը մեռնի, այլ կուենք մինչև որ գաղափարը գործ դառնայ, որովհետև հեռու չէ այն օրը, որի համար զոհւել ենք և տանջւել։

Յիշենք մեր տխուր անցեալը, մեր դարևոր տանջանքը և տոգորւած հերոսների վեհ ձգտումներով ընթանանք այնտեղ, ուր կսկիծ կայ, ուր հեծում է հայ կեանքը։

Թող վառ լինեն մեր ճրագները և մեր կեանքը և աշխատանքը նուիրենք մեր ազգութեան քանի որ նա թոյլ է, հարստահարւած։

Պաշտենք հայրենիքի գաղափարը և վառւած մի կրակով, մի զգացումով պատրաստւենք վաղեան սրբազան պայքարին համար, քանի որ ապրելու համար կուիւ է հարկաւոր։

Այլ և ոչ թէ վարանումներ, այլ նուաղ, տոկունութիւն, վճռողականութիւն դէպի գործ։ Միանանք ընդհանուր պայքարին համար և քաշենք դէպի մի ամբողջութիւն, մի զանգւած խոնտակելու, հիմնայատակ անելու բռնութեան սիւները և նրա աւերակների վրայ հաստատելու հայ ազատագրութեան դրօշը՝

«Որովհետև ժողովուրդ էինք Թափառական ղարձանք,
Կուռղներ էինք աղերսողներ ղարձանք»...

Այլևս չաղերսենք, այլ կուենք, քանի որ լացն ազերսանքը չէ որ ապահովում են մարդկային կեանքը, այլ յարատև կռիւը։

Առանց կուի չը կայ իրաւունք, լինենք զէնքի մարտիկներ և մեր մէջն ալ թող ծնեն Ալօյեաններ, Պէտօներ, Վագդէններ, Թիրայրեր, Հրայրներ,

Որովհետև՝

«Որու սուրը կտրուկ լինի
Որու գնդակը հեռի նետի,
Որաւունքը անոր կըլլայ
Աշխարն այնպէս կը հաւատայ»։

Յետոյ բեմ եկաւ վարժարանի, յարգելի ուսուցիչներէն պ. Սիմէոն Տիրիկեան և խիստ գունաւոր պատկերներով նկարագրեց 1895 թ.ի վանի կոտորածներու ժամանակ Աւետիսեանի կատարած դերը—ընդդէմ քրդական բանակներին և հայ ժողովրդի քաշած զուլումները այդ սև օրերին մէջ։

Յետոյ խրախուսեց ընկերները ազգասիրական ոգով և փակեցաւ ժողովս «Յանասոր» երգով։

Դաղթակ

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ **Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆՑ**

ԲԱԳՈՒ

Առաջարկում է ամբողջ Կովկասի եւ Պարսկաստանի համար
ԴԻԶԵԼ ՇԱՐԺԻՉՆԵՐ (Մօտոռներ)
այտնի ԿՕԼՕՄԲՆՍԿԻ ընկերութեան մեքենագործարանի
Հասարակ ՆԱԻԹԱՇԱՐԺԻՉՆԵՐ (Մօտորներ)
անգլիական ԿՐՕՍՍԼԷՅ ընկերութեան գործարանից
ԷԼԵՔՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ամեն տեսակի
ՋՐՀԱՆ և ՋՐՄՈՒՂ (Նասոսները) մեքենաներ
ՋՐԻ ՏՈՒՐԲԻՆՆԵՐ, ՄԵՔԵՆԱՂԱՑՆԵՐ
ՍԱՌՈՅՑ ՊԱՏՐԱՍՏՈՂ մեքենաներ
ԲԱՄԲԱԿ ՄԱՓՐՈՂ մեքենաներ
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ մեծ մեքենաներ. յոկօմօտիւնեը ցորեն մաքրող մեքենաներ (մօլոտիլկա) տրաքտորները և այլն
յայտնի, ամենահին ամերիկական ԿԷՅՍ (Case) ընկերութեան գործարանից
ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ մեծ ճանապարհների վրայ աշխատելու համար, նոյն ամերիկական ԿԷՅՍ (Case) ընկ. գործարանից

Վերոյիշեալ Տեխնիքական Գրասենեակը իր վրայ է վերցնում զանազան գործարանները սարքել և գործի գցել իր միջոցներով, ինժեներներով և վարպետներով:

Դիմել՝ Баку, Техническая Контора инженера Т. А. Будагянцъ.

Արտասահմանից. Bacou (Russie) Bureau Technique T. Boudaguian ingénieur. *(12—9)*

Ուսուցիչ Հիրօն ընդունում է հրամարհվական առարկաներ վերապատրաստում է արքունական քննությունների համար: Մասնագրերում է արքունական քննություններին պատրաստվելու համար: Ընդունելութիւնը տեղի է ունենում ամեն օր առաւօտեան ժամը 10—1 և երեկոյեան 5—7 ժամը: Հասցէն՝ Тифлис. БЮРО ПЕЧАТИ Головин. пр. 41.

НИВА еженедѣльный иллюстрированный журналъ. ОТКРЫТА ПОДПИСКА НА 1915 Г.

ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:

52 №№ журнала: повѣсти, разск., картины, рис. въ краск., иллюстраціи съ театра воен. дѣйствій.

52 КНИГИ, отпечатанныя четкимъ шрифтомъ, въ которыя войдетъ:

12 КНИГЪ ЕЖЕМѢСЯЧН. ЖУРНАЛА „ЛИТЕРАТУРНЫЯ и ПОПУЛЯРНО-НАУЧНЫЯ ПРИЛОЖЕНІЯ"

40 книгъ „СБОРНИКА НИВЫ", содержащихъ:

I-ю СЕРІЮ—18 КНИГЪ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ **Д. Н. МАМИНА-СИБИРЯКА.**

ПОЛНОЕ СОБРАНІЕ —СОЧИНЕНІЙ— въ 12 книгахъ **И. А. БУНИНА.**

НОВОЕ ПРОИЗВЕДЕНІЕ (Оконч. повѣсти „ЯМА") въ 2-хъ книгахъ **А. И. КУПРИНА.**

ПОЛНОЕ СОБРАНІЕ —СОЧИНЕНІЙ— въ 8 книгахъ **М. МЕТЕРЛИНКА.**

1 Генеральная карта средне-европейскаго и южнаго театра военныхъ дѣйствій, подъ ред. проф. Ю. М. Шокальскаго.

12 №№ „Ежемѣсячныхъ новѣйшихъ модъ". 12 ЛИСТОВЪ выкроекъ и рисунк. рукодѣльи работъ.

1 „ОТРЫВНОЙ ЕЖЕМѢС. КАЛЕНДАРЬ" на 1915 г.

ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ" со всѣми приложеніями на годъ: безъ доставки: въ Петроградѣ—6 р. 50 к., въ Москвѣ, у Печатковской, 7 р. 25 к., въ Одессѣ. „Обязовая"—7 р. 50 к.; съ дост. въ Петроградѣ—7 р. 50 к., съ пересылкою во всѣ мѣста Россіи 8 р.

Адресъ: Петроградъ, въ Контору журнала „НИВА", улица Гоголя, № 22.

Դիմելագիայի բարձր դասարանների աշակերտ ամենայն տեսակ դասարանների աշակերտների դասերը թե լեզուներից եւ թե առարկաներից:

ՎՃԱՐԸ ԱՄԵՆԱՁԱՓԱՀՈՐ

Դիմել՝ Курсы Нѣнія г. Броджи. 5—5

Дозволено воен. цензурой 1915 г. Тифлис.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1915 ГОДЪ

на ежедневную газету

„Кавказское Слово"

Адресъ редакціи и конторы: Тифлисъ, Барятинская, 6.

Подписная цѣна на газету: для гор. подписчиковъ для иногородныхъ

на 1 годъ	7 р. — к. . . .	8 р. 50 к.
на 6 мѣс.	4 „ — „	5 „ — „
на 3 мѣс.	3 „ — „	2 „ 50 „
на 1 мѣс.	— „ 80 „	1 „ — „

Допускается разсрочка подписной платы лишь для годовыхъ подписчиковъ, при условіи непосредственнаго обращенія въ контору газеты.

Пользующіеся разсрочкой уплачиваютъ: городскіе подписчики—при подпискѣ—3 р., къ 1 марта—2 р. и къ 1 марта—2 р.; иногородніе—при подпискѣ—4 р. 50 коп., къ 1 марта—2 р. и 1 мая—2 р.

Сельскимъ учителямъ, сельскимъ священникамъ, рабочимъ, мастеровымъ и фельдшерамъ предоставляется скидка въ 10% съ подписной платы.

Книжнымъ магазинамъ и кіоскамъ, принимающимъ подписку—5% скидки.

Редакторъ: **Ю. Ф. Семеновъ.**

Издатель: Тифлисское Т-во Печатнаго дѣло.

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԵՈՐԳ—ԲԷԿԵԱՆ

(Вельяминовская, 8)

ԱԶԳԻ ՀԻՒԱՆԴ. ՄԱՍՆԱԳԷՏ

Ընդունելութիւն { առ. 10—1 ժ. / երեկ. 5—7 ժ. *(5—5)*

Луиза Альбертовна

ПРЕВИТЕРА

Возобновила уроки **Французскаго** и **Итальянскаго** яз. групами и въ отдѣльности

(3—2) Андреевская ул. № 6.

ԼՈՅՍ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԸՐԹՈՒԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱԼԵԱՆԻ

(Михайлов. пр., 22)

Կատարում է Լուսանկարչութեան վերաբերեալ ամենաբարդ գործեր:

Հանդէսների խմբանկարները թէ սենեակներում, թէ բացօդեայ տեղերում, խնճոյքների, էքսկուրսիաների եւն. կատարում է դեղ ու չքնաղ: *(4—7)*

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՓԱՓԱՀԵՂ ԿԱԶՄԵՐՈՂ (ընծաների համար)

1. ՊԵՐՃ ՊԱՕՇԵԱՆՑ՝ նգիպի Միւդիենց տուին.
2. Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ՝ Բանաստեղծութիւններ:
3. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ:
4. ՆԱՐ-ԴՈՍ՝ Նեղ օրերից մեկը:
5. ՇԻՐՎԱՆԶԱԴԵ՝ *Միքանիսս:*
6. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ Վ. Շեյխ Չաւադ *(Պատ. քրդ. կեանք.)*
7. Վ. ՓԱՓԱԶԵԱՆ՝ I Հայ բօշաների վրանները. II Արծիւ մանր:

Եօթը գրքոյկները միասին ճանապարհածախսով՝ 3 ր.: Աղբիւրի և Տարազի բաժանորդների համար 2 ր.:

Հասցէն՝ Тифлис, Редакція „АГБЮР"

Թիֆլիս, տպարան Ն. Ադաճեան Պօլից. 7.